

ԱՐՏՈՒՇ ԶՈՒՐԱԲՅԱՆ

ՄԱՐԴ, ՈՎ ԳՏԱՎ
ԱՍՏԾՈՒՆ


Աստված ուզում է, որ դու կարդաս այս գիրքը

ԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ • ԳԻՐԲ 1

Գիրքը չի ասում. «հավատա գրածին»

Այն ասում է. «գրածը ստուգիր»

Մարդկության 2500-ամյա հոգևոր ակնկալիքը



Մեկ հարց

Մեկ ճանապարհ

Մեկ պատասխան

Լուռ վկայություն

Մարդկության մշակույթում վաղուց գոյություն ունի մի լարվածություն երկու դիրքերի միջև:

«Կտեսնեմ — կհավատամ», ասում է մարդը:

«Հավատա — կտեսնես», ասում է Աստված:

Այս գիրքը ծնվում է հենց այդ լարվածության կետում:

Այն չի փորձում փոխարինել հավատքը:

Այն փորձում է հարց տալ:

Կարո՞ղ է արդյոք այն, ինչ հազարամյակներ ապրել է հավատքի լեզվով, ստանալ նաև ստուգելի գիտական ձև:

Գրեթե 2500 տարի մարդիկ նույն հարցն են տվել:

Արդյո՞ք Աստված գոյություն ունի:

Փիլիսոփաները փորձել են պատասխանել դրան տրամաբանությամբ:

Աստվածաբանները՝ հավատքի լեզվով:

Գիտնականները հաճախ պարզապես շրջանցել են այդ հարցը:

Բայց ինչ կլինի, եթե այդ հարցը հնարավոր լինի ստուգել գիտական ճանապարհով:

Այս գիրքը առաջարկում է մի պարզ փորձություն:

1000 օր՝ այդ հարցը բաց գիտական գործընթացի միջոցով ստուգելու համար:

Եթե այդ ընթացքում հայտնվի ապացույց՝ աշխարհը
կիմանա դրա մասին:

Եթե ոչ՝ աշխարհը նույնպես կիմանա դա:

2500 տարվա հարց:

1000 օր այն ստուգելու համար:

1 օր՝ պատասխանելու:

2026 թվական

Երևան

Ես գրեցի այս գիրքը, որովհետև հարցը փակ էր:
Իսկ փակ հարցը չի կարող ստուգվել:
Սա հավատքի գիրք չէ:
Սա ստուգման հրավեր է:
Եթե դու կարդում ես այս գիրքը,
դու արդեն մասնակից ես:

Հեղինակ՝ Արտուշ Զուրաբյան

ՆԱԽԱԲԱՆ – ԵՌԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Այս գիրքը սկսվում է մի ուղիղ հայտարարությունից:
Մարդը խիստ գիտական ճանապարհով ապացուցել է
Աստծո գոյությունը:

Այս պնդումը հակասում է ժամանակակից գիտական
պատկերացմանը, որի համաձայն Աստծո գոյության
հարցը սովորաբար չի համարվում գիտական թեմա և
գտնվում է ակադեմիական քննարկման սահմաններից
դուրս: Այդ պատճառով ներկայացվող ապացույցը չի
կարող ամբողջությամբ տեղավորվել գոյություն
ունեցող գիտական ուղիների մեջ:

Այս գիրքը գրվել է որպես այլընտրանքային
ճանապարհ:

Այն ներկայացնում է «1000 օրվա նախագիծ»՝ բաց և
հանրային գիտական գործընթաց, որի նպատակն է
ստուգելի ձևով ցուցադրել ներկայացված ապացույցը:
Սա փորձ է ստեղծելու մի տարածք, որտեղ հնարավոր
է համատեղ դիտարկել, քննարկել և փորձարկել այն,
ինչ սովորաբար դուրս է մնում ընդունված
շրջանակներից:

Ընթերցողը այս գրքում չի դիտարկվում որպես
հանդիսատես: Նրան առաջարկվում է դառնալ այս
նախագծի մասնակից՝ դատավոր: Գիրքը հրավիրում է
ոչ թե հավատալ, այլ մասնակցել ստուգման փորձին:

Միևնույն ժամանակ այս գիրքը միայն գիտական նախագիծ չէ: Այն հիմնված է իրական դեպքերի վրա և գրվել է որպես կենդանի փորձի արձանագրություն:

Այստեղ չկան հորինված հերոսներ կամ չափազանցված հաղթանակներ: Այստեղ կա մարդ, ժամանակ և փորձ՝ ինչպես է մի կյանք ձևավորվում փաստերի, լուրջությունների, աշխատանքի և սխալների միջով:

Երկար ժամանակ ես չէի կարծում, որ իմ պատմությունը կարող է դառնալ գրքի նյութ: Այն ինձ թվում էր միաժամանակ չափազանց սովորական և չափազանց անձնական: Սակայն տարիների ընթացքում հասկացա, որ մարդը իր կյանքի ընթացքում ոչ միայն ապրում է, այլ նաև անընդհատ ինչ-որ բան է ապացուցում՝ իրեն, ուրիշներին և երբեմն՝ իրականությանը:

Աստծո գոյության ներկայացվող ապացույցի գործընթացը հնարավորինս ամբողջական և օբյեկտիվ ձևով ներկայացնելու համար նախատեսված է գրել երեք գիրք՝ որպես միասնական եռագրություն:

Առաջին գիրքը պատմում է այն ճանապարհի մասին, որով մարդը հասել է այս եզրակացությանը: Այն ցույց է տալիս, թե ինչպես են անձնական կյանքը, կրթությունը, աշխատանքը և ներքին որոշումները միավորվում մեկ ամբողջության մեջ: Սա պատմություն

է ոչ միայն հաջողությունների, այլ նաև կասկածների, ուշացած ճանաչման և սպասման մասին:

Երկրորդ և երրորդ գրքերը նախատեսվում է գրել առցանց ձևաչափով՝ որպես այս գիտական և մարդկային ճանապարհի շարունակություն՝ ձևավորվելով բաց ընթացքով, արձագանքների և քննարկումների մեջ:

Այս գիրքը չի գրվել շտապ, բայց թղթին է հանձնվել շտապ: Այն գրվել է տարիների ընթացքում կուտակված մտածողությունից: Եթե ընթերցողը կարդալիս երբեմն կանգ առնի, լռի կամ վերադառնա մի նախադասության, ապա գիրքը կատարել է իր նպատակը:

Սա պատմություն է մեկ մարդու, մեկ գիտական ապացույցի և մեկ ընթերցողի մասին: Այս գրքի հեղինակը հայտարարում է, որ իրեն հաջողվել է գիտական ճանապարհով ապացուցել Աստծո գոյությունը և գտնել Նրան: Այս գիրքը գրվել է այդ ճանապարհը բաց ներկայացնելու համար, որպեսզի յուրաքանչյուր մարդ կարողանա ծանոթանալ դրան և ինքնուրույն կանգնել այդ հարցի առաջ:

Ընարավո՞ր է, որ Աստծո գոյությունը ունենա գիտական ապացույց:

Եթե այդ ապացույցը գոյություն ունի, ապա խոսքն արդեն միայն հավատքի մասին չէ:

Խոսքը ճշմարտության մասին է:

Եվ այստեղ յուրաքանչյուրի մոտ բնական հարց է առաջանում:

Իսկ եթե սա՞ ճիշտ է:

«Ես ուզում եմ տեսնել՝ արդյոք դա ճիշտ է»:

Այս գիրքը ստեղծում է սպասման զգացում:

1000 օրը դառնում է մի տեսակ ավազե ժամացույց — ոչ միայն ընթերցողի համար, այլ այն պահի համար, երբ մարդկությունն ինքը պետք է տեսնի արդյունքը:



ՄԱՐԴ

ՄԱՍ I — ՍԿԻԶԲ

ԳԼՈՒԽ 1. Շինհրապարակը

Հայրս շինարար էր: Ավելի ճիշտ՝ շինարարական հրապարակի ղեկավար: Նրա ձեռքի տակ շենքեր էին բարձրանում Կիրովականում՝ այն ժամանակ Խորհրդային Հայաստանի երրորդ մեծ քաղաքում: Քաղաքը մեծանում էր, և հայրս գրեթե միշտ աշխատանքի մեջ էր՝ վաղ առավոտից մինչև ուշ երեկո:

«Այդ շինհրապարակը պարզապես աշխատավայր չէր:

Այն իմ մանկության առաջին դպրոցներից մեկն էր»:

Նա գրեթե չէր զբաղվում մեր դաստիարակությամբ: Ոչ թե որովհետև չէր ուզում, այլ որովհետև չէր կարող:

Մայրս էլ չէր դիմում նրան: Քույրերս լավ էին սովորում, իսկ ես՝ տան ամենափոքրը, ավելի շատ սիրված ու խնամված էի, քան վերահսկված:

Այդ տարիներին ես ժամանակիս մեծ մասն անցկացնում էի փողոցում:

Մի օր, ամառային արձակուրդների ընթացքում, դեռ մթնշաղ էր, երբ հայրս արթնացրեց ինձ: Վերմակս մի կողմ քաշեց և ասաց՝

— Արագ հագնվիր, տեղ ենք գնում:

Ես զարմացած հագնվեցի: Մենք դուրս եկանք տնից և երկար քայլեցինք: Երբ հասանք, հասկացա, որ

շինհրապարակում եմ՝ այնտեղ, որտեղ հայրս
աշխատում էր:

— Ես ինչո՞ւ եմ այստեղ, — հարցրեցի:

Հայրս նայեց ինձ՝ միաժամանակ վիրավորված և
վրդովված:

— Մայրդ ասաց, որ փողոցից տուն չես գալիս, — ասաց
նա, — դպրոցում էլ վատ ես սովորում: Հիմա այստեղ
կաշխատես որպես սևագործ բանվոր: Կիմանաս, թե
չսովորողները ինչ են դառնում:

Ես աշխատեցի ոչ թե մեկ օր, այլ քառասունհինգ օր
անընդմեջ՝ օրական վեց ժամ:

Աշխատում էի լուռ, առանց հարցերի: Ծանր
աշխատանք էր: Ձեռքերիս վրա մագոլներ
առաջացան: Դրանք հիմա էլ կան: Երբեմն նայում եմ
դրանց կարոտով՝ դրանք հիշողություն են, ոչ ցավ:

Այդ քառասունհինգ օրերի ընթացքում ես առաջին
անգամ իսկապես ճանաչեցի սովորական բանվոր
մարդկանց՝ նրանց հոգսը, լռությունը և
արժանապատվությունը: Հայրս ինձ մեծ դաս տվեց՝
առանց որևէ դասախոսության:

Երբ աշխատանքն ավարտվեց, հայրս ինձ
աշխատավարձ տվեց: Նայեց ինձ և ասաց.

— Կծախսես քո ցանկությամբ: Բայց քույրերիդ և
մայրիկիդ նվերներ կգնես:

Իր մասին ոչինչ չասաց:

Ես նվերներ գնեցի քույրերիս և մայրիկիս: Եվ գնեցի նաև իր համար, բայց նախօրոք ոչինչ չասացի: Երբ տվեցի, նկատեցի, որ նա հուզվեց՝ լուռ, ինչպես իր բնավորությունն էր:

Այդ պահին հայրս երկար նայեց ինձ և ասաց մի բան, որը ես երբեք չեմ մոռացել:

— Հիմա գիտեմ, որ դու բանվորի հոգսը գիտես: Դու կդառնաս լավ և բարի մարդ: Իսկ երբ մի օր ղեկավար դառնաս, ղեկավարներից ամենալավը կլինես, որովհետև կիմանաս ամենացածր խավի կյանքը: Ընտո ավելացրեց:

— Ես հիմա հանգիստ եմ քեզ համար:

Այդ քառասունհինգ օրերը ինձ փողոցից չկտրեցին:

Բայց դրանք ինձ փոխեցին:

Ըայրս ինձ սովորեցրեց աշխատել:

Մայրս հետո ինձ սովորեցրեց սովորել:

Ես այսօր նրանց տված բարիքի սիներգիան եմ:

ԳԼՈՒԽ 2. Տորթը

Այդ օրը ես արդեն տասնհինգ տարեկան էի:

Մեր ընտանիքը հարգված էր: Քույրերս գերազանց էին սովորում. երկուսը՝ կոնսերվատորիայում, մեկը՝ բժշկական համալսարանում: Մեր մասին խոսելիս միշտ նրանց էին հիշատակում: Իմ մասին՝ ոչ: Ոչ թե որովհետև ես չկայի, այլ որովհետև դեռ դպրոցական էի, և իմ կյանքի մասին պարզապես լռում էին:

Այդ օրը մենք հրավիրված էինք խնջույքի: Սեղանը լի էր, խոսակցությունները՝ բարձր, ծանոթ մարդկանց ձայներով: Ես նստած էի մայրիկիս կողքին և լուռ տորթ էի ուտում: Ես ավելի շատ լսում էի, քան մասնակցում:

Մեր հեռու բարեկամուհին ժպտալով հարցրեց.

— Քո երեք աղջիկները հրաշալի են սովորում, դա հասկանալի է, իսկ տղադ ինչպե՞ս է սովորում:

Հարցը հնչեց սովորական: Բայց օդը փոխվեց:

Մայրս անմիջապես չպատասխանեց: Ես զգացի նրա լռությունը: Նա ծանր հոգոց հանեց: Այդ հոգոցը ավելի խոսուն էր, քան ցանկացած բառ:

— Տղաս... — ասաց նա կամաց, — աղջիկներիս հակառակն է: Սպասում եմ, որ ութերորդ դասարանն ավարտի, հետո կտամ մի տեղ, որ արհեստ սովորի: Դպրոցը, երևի, չի ավարտի:

Նա չէր մեղադրում: Նա պարզապես փաստ էր ասում:
Բայց այդ փաստի մեջ կար տխրություն և
հոգնածություն:

Բարեկամուհին փորձեց մխիթարել նրան: Պատմեց մի
տղայի մասին, որը սկզբում ծույլ էր, հետո հավաքվեց,
սկսեց լավ սովորել և ընդունվեց համալսարան:

Ես շարունակում էի տորթս ուտել, բայց այն արդեն
քաղցր չէր:

Ներսունս ինչ-որ բան սկսեց շարժվել: Ոչ աղմուկով, ոչ
վախով, այլ պարզ մի մտքով. եթե հնարավոր է մեկ
ուրիշի համար, հնարավոր է նաև ինձ համար:

Ես նայեցի մայրիկիս: Նա չէր նայում ինձ: Նրա
հայացքը ներս էր ուղղված: Եվ այդ պահին ես
հասկացա, որ ուզում եմ, որպեսզի նա այլևս երբեք
այդպես չնայեր:

Այդ որոշումը ոչ ոք չլսեց: Ոչ ոք չտեսավ: Բայց այն
կայացավ:

Հաջորդ օրը ես այլևս փողոց չգնացի:

Դպրոցից տուն էի գալիս, հաց էի ուտում և անմիջապես
մտնում սենյակս: Սկսեցի սովորել՝ երկար, մինչև ուշ
գիշեր: Որպեսզի հասնեմ դասընկերներիս, դպրոցական
գրադարանից վերցրի չորրորդից ութերորդ
դասարանների բոլոր դասագրքերը և սկսեցի
ինքնուրույն սովորել: Ինքս: Առանց օգնության: Առանց
արդարացումների:

Ծնողներս անհանգստացան: Հատկապես մայրս: Նրա տղայի հետ ինչ-որ բան էր կատարվում, բայց նա դեռ չէր հասկանում՝ ինչ: Երբեմն նույնիսկ վախենում էր՝ մտածելով՝ արդյոք ամեն ինչ կարգի՞ն է ինձ հետ:

Այդպիսի շրջադարձը անսպասելի էր:

Մի օր նա ինքն էր ինձ համոզում, որ բակ իջնեմ, մի քիչ խաղամ:

Ես արդեն այլ տեղ էի:

Այդ օրվանից փողոցը կամաց-կամաց կորցրեց իր ձայնը, իսկ դասագիրքը դարձավ իմ խոսակիցը:

Այդ որոշումը չէր ծնվել վախից:

Այն ծնվել էր մոր լռությունից:

ԳԼՈՒԽ 3. Դասագիրքը

Ես արդեն ութերորդ դասարանում էի, բայց սկսեցի ինքնուս սովորել ամենասկզբից՝ չորրորդ դասարանի դասագրքերից:

Սենյակս փոքր էր: Սեղանը՝ հին: Լույսը՝ դեղնավուն: Բայց այդ ամենը կարևոր չէր: Կարևորը դասագիրքն էր՝ բացված իմ առաջ:

Ես պետք է հասնեի այնտեղ, որտեղ մյուսներն արդեն կանգնած էին՝ քայլ առ քայլ, առանց շրջանցումների:

Դասագրքերը խոսում էին իրենց լեզվով՝ սառը և անանձնական: Բայց ես ստիպում էի ինձ լսել դրանք: Ամեն էջ մի փոքր հաղթանակ էր: Ամեն լուծված խնդիր՝ մի փոքր վստահություն:

Երբեմն չէի հասկանում: Փակում էի գիրքը: Նայում էի պատին:

Ներսունս խոսակցություն էր գնում:

Եթե հիմա կանգ առնեմ, ամեն ինչ կմնա նույնը:

Եթե շարունակեմ, գուցե փոխվի:

Ես շարունակում էի:

Ժամանակը կորցրեց իր չափը: Գիշերը գալիս էր առանց զգուշացնելու: Մայրս երբեմն բացում էր դուռս, նայում էր և ոչինչ չէր ասում: Նրա լռությունն այս անգամ ծանր չէր: Այն հսկողություն էր: Խնամք:

Ես սովորում էի ոչ թե գնահատականի համար: Ես սովորում էի, որպեսզի փոխվեմ: Որպեսզի կարողանամ

նայել ծնողների աչքերին: Որպեսզի կարողանամ
հանգիստ քայլել փողոցով՝ առանց նրանց կանչի:
Դասագիրքը դարձավ իմ տարածքը: Այնտեղ ես մենակ
էի: Բայց այդ մենակությունը դատարկ չէր: Այն լցված էր
նպատակով:
Օր օրի սկսեցի զգալ, որ ինչ-որ բան տեղ է փոխվում:
Միտքս սկսեց աշխատել ավելի կարգավորված: Ես
հասկացա, որ կան օրենքներ: Որ ամեն ինչ
պատահական չէ: Որ եթե կա խնդիր, կա նաև լուծում:
Երբ առաջին անգամ դասարանում ինձ հարց տվեցին, և
ես ճիշտ պատասխանեցի, ոչինչ չասացի: Բայց ներսումս
ժպտացի:
Ես դեռ երկար ճանապարհ ունեի անցնելու:
Բայց այդ փոքր սենյակում, հին սեղանի մոտ,
դասագիրքը դարձավ իմ առաջին իրական ուսուցիչը:

ԳԼՈՒԽ 4. Դպրոցը

Դպրոցը երկար ժամանակ ինձ համար պարզապես շենք էր՝ դասարաններ, զանգեր, գրատախտակ: Ես այնտեղ լինում էի, բայց ներսում չէի:

Երբ սկսեցի սովորել, դպրոցը դարձավ այլ բան: Այն դարձավ հայելի: Եվ դատավոր:

Մեկ տարվա ընթացքում հասա բոլորին: Ոչ հրաշքով, այլ ամենօրյա աշխատանքով՝ ամեն օր, ամեն դաս, ամեն էջ: Երբ դասարանում սկսեցին նկատել դա, սկզբում չհավատացին, հետո սկսեցին ստուգել՝ ավելի շատ հարցնել, ավելի խիստ:

Դպրոցը չի խաբվում:

Ուսուցիչները զարմացած էին: Ոչ բարձրաձայն, բայց զգալի: Երբեմն նայում էին ինձ այնպես, կարծես փորձում էին հասկանալ, թե որտեղից է այս փոփոխությունը:

Մի օր դպրոցում առաջարկ եղավ: Իմ արդյունքները տեսնելով՝ մեծ պատրաստակամությամբ առաջարկեցին մայրիկիս ինձ տեղափոխել սովորական դասարանից մաթեմատիկական թեքումով հատուկ դասարան:

Մայրս լսում էր լուռ: Այդ լռությունն արդեն ուրիշ էր: Այն այլևս տխուր չէր:

Ես տեղափոխվեցի այդ դասարան և այնտեղ հասկացա, որ ընտրել եմ ճիշտ ճանապարհը: Թվերը

սկսեցին խոսել ինձ հետ: Խնդիրը դարձավ
հետաքրքիր, իսկ լուծումը՝ ներքին կարգ:

Ես ավարտեցի դպրոցը գերազանց
առաջադիմությամբ:

Դպրոցը ինձ ոչինչ չնվիրեց: Այն պարզապես
արձանագրեց այն, ինչ ես արել էի:

Եվ այդ արձանագրությունը դարձավ իմ առաջին
իրական արդյունքը:

ՄԱՍ II — ՃԱՆԱՊԱՐՀ

ԳԼՈՒԽ 5. Առաջին ճեղքերը

Համալսարան ընդունվելը իմ կյանքի ամենալուսավոր պահերից մեկն էր:

Ես անկեղծորեն ուրախացրեցի ծնողներին: Հայրս ուրախությունից հյուրասիրում էր բոլորին: Նա չէր սիրում երկար խոսել, բայց այդ օրերին նրա լռությունը ուրախ էր: Մայրս, հակառակը, պատմում էր բոլորին, թե ինչպես դա տեղի ունեցավ, ինչպես փոխվեց իր տղան: Քույրերիս հետ միասին ես հրճվում էի այն զգացումով, որ վերջապես նմանվել եմ նրանց:

Բայց համալսարանը շատ արագ ցույց տվեց իր մյուս կողմը:

1980 թվականի սեպտեմբերի 2-ն էր՝ իմ առաջին օրը համալսարանում: Առաջին դասը «Մաթեմատիկական անալիզի հիմունքներ» առարկան էր: Դասախոսը՝ պրոֆեսոր Իայի Միքայելյանը:

Նա մտավ լսարան և, նախքան դասը սկսելը, ասաց մի նախադասություն, որը մինչև այսօր մնացել է իմ մեջ:

— Բարև ձեզ, սիրելի առաջին կուրսեցիներ:

Շնորհավորում եմ բոլորիդ և... ցավակցում ձեզ:

Լսարանում քար լռություն տիրեց: Մոտ

յոթանասունհինգ ուսանող: Այդ լռության մեջ մեկը համարձակվեց հարցնել:

— Ինչպե՞ս դա հասկանալ, պրոֆեսոր:

Պրոֆեսոր Միքայելյանը հանգիստ պատասխանեց՝

— Ես ցավակցում եմ ձեզ նրանով, որ դուք, ձեռք բերելով մաթեմատիկոսի մասնագիտությունը, կյանքում այդքան երջանիկ չեք լինելու: Դուք բոլորին կհասկանաք, իսկ ձեզ նրանք՝ ոչ:

Եվ ավելացրեց՝

— Իմ ասածի իսկության ապացույցը դուք կունենաք, երբ ավարտեք համալսարանը:

Այդ օրը շատ բաներ սկսվեցին առանց անմիջական պատասխանների:

Երկրորդ կուրսում իմ կյանքում եղավ ծանր ընդմիջում:

Մահացավ հայրս՝ Լևոնը: Ընտանիքը, մորս գլխավորությամբ, հայտնվեց ֆինանսական ծանր կացության մեջ: Մայրս ստիպված անցավ երկրորդ աշխատանքի: Ես տեսնում էի նրա հոգնածությունը և հասկացա, որ այլևս չեմ կարող միայն ուսանող լինել:

Ես սկսեցի աշխատել՝ ուսմանը զուգահեռ:

Տարբեր աշխատանքներ:

Տարբեր ժամեր:

Դա անմիջապես ազդեց դասերին հաճախելու վրա: Ես հաճախ էի բացակայում, և դա չէր կարող չանդրադառնալ գնահատականների վրա:

Խորհրդային համակարգը պարզ էր. շատ
բացակայություններ ունեցողը չէր կարող լինել
գերազանցիկ:

Բայց ես գնահատականները չէի կարևորում: Ես
կարևորում էի գիտելիքը:

Մինչև հինգերորդ կուրս ֆակուլտետում իմ մասին
ձևավորվել էր տպավորություն, թե ես թույլ սովորող եմ
կամ նույնիսկ չսովորող: Ես դա գիտեի, բայց չէի
վիճում: Իմ պատերազմը ուրիշ տեղ էր:

Եվ այդ պատերազմը մի օր դուրս եկավ մակերես:

«Դիֆերենցիալ հավասարումներ» առարկան
դասավանդում էր ֆակուլտետի դեկան՝ ակադեմիկոս
Ռաֆայել Ալեքսանդրյանը: Մեր կուրսում 175 ուսանող
կար, և այդ առարկան նա դասավանդում էր բոլորին
անձամբ: Ըստ ուսումնական կարգի պետք է հանձնեինք
բարդ գրավոր ստուգարք՝ դիֆերենցիալ հաշվարկից:
Երբ արդյունքները ներկայացվեցին, Ալեքսանդրյանը
ակնհայտ վրդովված էր: Նա ասաց.

— Ես զարմացած եմ: Երևի ես չեմ կարողացել ձեզ
ճիշտ ներկայացնել առարկան: 175 ուսանողից, որոնց
մեջ կան ավելի քան 20 գերազանցիկներ, միայն մեկ
հոգի է ստացել ամենաբարձր գնահատականը: Եթե ես
եմ վատ բացատրել, այդ մեկ հոգին էլ չպետք է լիներ:
Բայց կա: Եվ ես անչափ շնորհակալ եմ նրան:

Լսարանում լարվածություն առաջացավ: Բոլոր
գերազանցիկները սպասում էին իրենց անունին:

Ակադեմիկոս Ալեքսանդրյանը կարդաց անունը և
խնդրեց ուսանողին կանգնել:

Նա կարդաց իմ անունն ու ազգանունը:

Ես կանգնեցի:

Նա նայեց ինձ և խիստ, գրեթե վիրավորական տոնով
ասաց.

— Նստիր, այ տղա, ինչո՞ւ ես կանգնել:

Քար լռություն:

Նա նորից կարդաց անունը և ասաց.

— Ո՞վ է այդ ուսանողը: Թող կանգնի:

Ես նորից կանգնեցի:

— Դու արդեն անկարգություն ես անում, — ասաց նա,

— դուրս արի լսարանից:

Ես պատրաստվում էի դուրս գալ, երբ լսարանը
շարժվեց: Ընկերներս սկսեցին պաշտպանել ինձ:

Ասացին, որ հենց ես եմ այդ ուսանողը:

Ալեքսանդրյանը գույնափոխվեց: Նա ներողություն
խնդրեց և շնորհակալություն հայտնեց:

Վերջում ասաց մի նախադասություն, որը ես երբեք չեմ
մոռացել.

— Դու մաթեմատիկան ոչ թե հասկանում ես, դու այն
զգում ես: Քո մեջ թաքնված տաղանդ կա:

Այդ օրը ոչինչ չփոխվեց իմ գնահատականների մեջ:

Բայց փոխվեց մի բան ավելի կարևոր:

Դպրոցը եղել էր իմ արդյունքի հայելին: Համալսարանը
դարձավ իմ մտածողության փորձությունը:
Եվ առաջին ճեղքերը հենց այստեղ բացվեցին:

ԳԼՈՒԽ 6. Ուսուցիչը

Սերգեյ Մերգելյանի առաջին դասախոսությունը ես լավ եմ հիշում: «Ֆունկցիոնալ անալիզ» առարկան էր: Նա մտավ լսարան, և օդը փոխվեց:

Մենք հիացած էինք:

Եվ հպարտ:

Սերգեյ Մերգելյանը խորհրդային մաթեմատիկայի խոշորագույն դեմքերից էր՝ գիտնական, որի անունը վաղուց էր դարձել լեգենդ մասնագիտական աշխարհում:

Ոչ բոլոր օրերն են, որ ուսանողը գիտակցում է՝ մեծ մարդու ներկայության մեջ է:

Բայց իրական հանդիպումը սկսվեց ոչ թե նրա խոսքից, այլ հարցից:

Դասախոսության ընթացքում նա հանկարծ դիմեց մեզ.

— Կա՞ն այստեղ ուսանողներ, որոնք զբաղվում են չլուծված խնդիրներով: Եթե կան, խնդրում եմ՝ ձեռք բարձրացրեք:

Մոտ հիսուն ուսանողից միայն երկուսը ձեռք բարձրացրեցինք: Ես և Լս մեկ ուսանող:

Նա նայեց մեզ և հարցրեց.

— Ո՞ր խնդիրների վրա եք աշխատում:

Ես ասացի՝ Ֆերմայի մեծ թեորեմը:

Իմ ընկերը՝ Ռիմանի հիպոթեզ:

Նա լսեց և պարզապես ասաց.

— Դասից հետո մոտեցեք ինձ:

Դասից հետո մենք երկուսով ներկայացրինք մեր տեսլականները: Նա ուշադիր լսեց: Չընդհատեց: Չուղղեց: Եվ հետո ասաց մի բան, որը ինձ ուղեկցել է տարիներ շարունակ.

— Անլուծելի խնդիրը լուծելու համար պետք է միշտ փնտրել նոր սկիզբ: Եվ գնալ այն սկզբի ճանապարհով, որի հաջորդ քայլում դուք նկատում եք մեկ այլ սկիզբ: Այդ ճանապարհն է տանում դեպի լուծում:

Ես անմիջապես պատմեցի նրան, որ Ֆերմայի մեծ թեորեմի համար ես մուտք եմ գործել խնդրի տարածք 11 824 տարբեր սկզբերով:

Նա ժպտաց: Թիվը նրան զարմացրեց:

— Դու այդ մուտքերը հաշվառում և գրառում ես անու՞մ, — հարցրեց:

— Այո, — պատասխանեցի առանց երկմտելու:

Նա մի պահ մտածեց, հետո նորից հարցրեց:

— Դա քեզ ինչ է տվել:

— Ես լուծման նոր սկիզբ եմ փնտրել այդ 11 824 սկզբերի մեջ, — պատասխանեցի, — և այդ սկզբերը ունեն անընդհատություն հաջորդականության իմաստով:

Նա նորից ժպտաց:

Ասաց, որ միշտ սիրել է տարօրինակ մոտեցումները:

Այդտեղից սկսվեց մեր մտերմությունը:

Նրա միջնորդությամբ ես մասնակցեցի Լենինգրադում անցկացվող միջազգային կոնֆերանսին, որը նվիրված էր չլուծված խնդիրների ուսումնասիրությանը: Իսկ երբ նա դարձավ իմ ծննդավայրի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, 1985 թվականին ինձ հրավիրեց այնտեղ դասախոսելու:

Նա ինձ երբեք չասաց՝ «այսպես արա»:

Նա սովորեցրեց մտածել սկիզբների մասին:

Նա ինձ սովորեցրեց մտածել սկզբնաղբյուրների տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 7. Թաքնված ճանապարհը

Այն, ինչ տեղի ունեցավ Ալեքսանդրյանի լսարանում, չէր փոխում իմ առօրյան:

Ես շարունակում էի աշխատել:

Եվ շարունակում էի քիչ հաճախել դասերին:

Շարունակում էի սովորել իմ ռիթմով՝ ոչ միշտ համընկնող համակարգի պահանջների հետ:

Բայց ներսումս արդեն հստակ էր մի բան. իմ ճանապարհը տեսանելի չէր բոլորին:

Ֆակուլտետում ես դեռևս չէի համարվում «ուժեղ ուսանող»: Իմ անունը հազվադեպ էր հնչում օրինակների մեջ: Ես չէի պայքարում այդ տպավորության դեմ: Ես զբաղված էի այլ բանով՝ կառուցում էի իմ ներքին համակարգը: Այն, ինչ հետո պետք է դիմանար ամեն տեսակի ստուգման:

Համալսարանը մոտենում էր ավարտին: Եկավ ավարտական պետական քննությունների պահը: Քննություն, որտեղ գնահատականը այլևս չէր կախված բացակայություններից, ոչ էլ նախկին կարծիքներից: Այստեղ խոսում էր միայն պատրաստվածությունը:

Քննական հանձնաժողովի անդամների մեծ մասը ակադեմիկոսներ էին: Նրանց համար կարևոր չէր, թե դու ինչպիսի ուսանող ես եղել ընթացքի մեջ: Կարևոր էր միայն մեկ բան՝ ինչ ես դու կարողանում այդ պահին:

Երբ քննությունը ավարտվեց, ես ստացա գերազանց գնահատական:

Ոչ ոք չէր ծափահարում: Ոչ ոք չէր զարմանում բարձրաձայն: Բայց ինձ համար այդ գնահատականը կարևոր էր ոչ որպես հաղթանակ, այլ որպես հաստատում:

Այդ օրը ես վերջնականապես հասկացա մի բան. գնահատականը կարող է ուշանալ, ճանապարհը՝ ոչ: Իմ ճանապարհը երբեք ուղիղ չի եղել: Այն միշտ անցել է մի քիչ կողքով: Երբեմն՝ ստվերում: Բայց այդ ստվերում ես կարողացել եմ մտածել ազատ:

Այդ տարիներին ես ավելի ու ավելի էի խորանում չլուծված խնդիրների աշխարհում: Ոչ այն պատճառով, որ վստահ էի լուծման մեջ, այլ որովհետև այնտեղ հարցերն էին իրական: Իսկ իրական հարցերը չեն ենթարկվում ժամանակացույցի:

Ես արդեն գիտեի՝ եթե ուզում եմ զբաղվել գիտությամբ, պետք է պատրաստ լինեմ երկար ճանապարհի:

Ճանապարհի, որտեղ արդյունքը միշտ չէ, որ տեսանելի է, բայց որտեղ ամեն քայլը փոխում է քեզ:

Երբ ստացա ավարտական դիպլոմս և ակադեմիական կրճքանշանը, ֆակուլտետի դեկան, ակադեմիկոս Ռաֆայել Ալեքսանդրյանը, սեղմելով ձեռքս ասաց.

— Տղաս, դու արժանացել ես ֆակուլտետի 1985 թվականի լավագույն շրջանավարտի բարձրագույն պարգևին: Շնորհավորում եմ:

Նա ժպտաց և ծնողական ջերմությամբ շոյեց գլուխս:
Ես հուզվեցի, իսկ ներկաները ժպտալով ծափահարում
էին:

Այդ ակնթարթը մնաց ինձ հետ որպես հիշողություն,
որը ժամանակը չի վերացնում: Որոշ պահեր անցնում
են, բայց նրանց թողած զգացողությունը շարունակում
է ապրել մարդու ներսում:

Այս գլուխը փակվում է ոչ եզրակացությամբ, այլ
հանգիստ գիտակցմամբ:

Ես ավարտեցի համալսարանը:

Բայց ես դեռ նոր էի սկսում հասկանալ, թե ինչ է
նշանակում մտածել մինչև վերջ:

ՄԱՍ III — ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԼՈՒԽ 8. Պաշտոնը

Պաշտոնը երբեք չի եղել իմ ինքնանպատակը: Այն եկել է որպես հետևանք՝ կրթության, աշխատանքի և պատասխանատվության կուտակման: Եվ հենց այդ պատճառով ես շուտ հասկացա մի բան, որը սովորաբար ուշ են հասկանում՝ պաշտոնը բարձրություն չէ, այլ փորձություն:

Համալսարանն ավարտելուց հետո, որպես երիտասարդ գիտնական մասնագետ, պետական ուղեգրով նշանակվեցի այն ժամանակվա Խորհրդային Միության գիտահետազոտական ինստիտուտներից մեկում՝ «Պոլիմերսոսինձ» գիտահետազոտական ինստիտուտում, որը տեղակայված էր իմ ծննդավայր Կիրովականում (այժմ՝ Վանաձոր): Իր տեսակի մեջ այն միակն էր ամբողջ Խորհրդային Միությունում: Այնտեղ աշխատեցի 1985–1990 թվականներին՝ որպես գիտական աշխատող:

Իմ գործառույթը պարզ էր և միաժամանակ բարդ. աշխատում էի որպես մաքուր մաթեմատիկոս և, զուգահեռ, որպես ծրագրավորող՝ այն ժամանակվա BASIC լեզվով: Սա նշանակում էր ապրել մի միջավայրում, որտեղ տեսական մտածողությունը անմիջապես բախվում էր կիրառական խնդրի հետ: Այդ տարիներին նաև դիսերտանտ էի Հայաստանի

Գիտությունների ազգային ակադեմիայի
Մաթեմատիկայի գիտահետազոտական
ինստիտուտում՝ ակադեմիկոս Հանրի Ներսիսյանի
գիտական ղեկավարությամբ: Միաժամանակ
դասավանդում էի Կիրովականի պետական
մանկավարժական և պոլիտեխնիկական
ինստիտուտներում՝ որպես ավագ դասախոս:
Ես դասավանդում էի մի քանի առարկա.

- «Մաթեմատիկական անալիզի հիմունքներ»,
- «Օպտիմիզացիայի մեթոդներ»,
- «Կիրառական մաթեմատիկայի հիմունքներ»,
- «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված
համակարգերի ծրագրային ապահովում»:

Այդ տարիներին իմ կյանքը կարգավորված էր
համակարգի ներսում: Գիտությունը ուներ իր
հաստատությունները, դասախոսությունը՝ իր
լսարանները, պատասխանատվությունը՝ իր
սահմանները: Բայց հենց այստեղ էս առաջին անգամ
սկսեցի զգալ պաշտոնի իրական գինը:

Պաշտոնը պահանջում է ոչ միայն գիտելիք, այլ նաև
լռություն: Այն պահանջում է համաձայնություն այն
կանոնների հետ, որոնք դու չես սահմանել: Եվ որքան
բարձր է դիրքը, այնքան նեղ է մանրի դաշտը,
այնքան քիչ է ինքնուրույն որոշումների ազատությունը
և այնքան բարձր է յուրաքանչյուր սխալի գինը:

90-ականների սկիզբը փոխեց ամեն ինչ: Խորհրդային Միության փլուզումը քանդեց ոչ միայն պետությունը, այլև գիտական ու կրթական կյանքի հենակետերը: Ես դուրս եկա «Պոլիմերսուինձ» ինստիտուտից և իմ ծննդավայրում հիմնադրեցի բարձրագույն ուսումնական հաստատություն՝ «ՍԱՆԱՀԻՆ» կառավարման ինստիտուտը՝ անկախ Հայաստանի առաջին մասնավոր ԲՈՒՀ-ը: Ես դարձա դրա ռեկտորը և այդ պաշտոնում մնացի քսան տարի:

Զուգահեռ հիմնադրեցի մի շարք բիզնեսներ, որոնք կառավարվում էին իմ ստեղծած «Հանրապետական մարքեթինգի բիզնես-բիրժ-բանկ ասոցիացիա» ընկերության միջոցով՝ անասնապահական ֆերմա, շինարարություն, մեծածախ առևտուր, բորսա, բանկային գործունեություն, թանգարանային գործ: Արտաքուստ սա հաջողության պատմություն էր:

Բայց ներսում սկսվում էր այլ գործընթաց:

Իմ ներքին բալանսը փոխվում էր: Եթե սկզբում ամբողջությամբ գիտնական էի, ապա ժամանակի ընթացքում դարձա բիզնեսմեն՝ մոտ 90%, գիտնական՝ 10%: Ես ապրում էի միաժամանակ երկու աշխարհում՝ բիզնեսի և գիտության: Այդ հարաբերակցությունը կայուն չէր: Տարիների ընթացքում այն սկսեց փոխվել. բիզնեսի բաժինը նվազում էր, գիտությանը՝ աճում: Ես զգում էի կյանքի ծայրահեղ տատանումները նյութական իմաստով՝ հարուստից աղքատ և նորից

հարուստ, ապա կրկին աղքատ: Այդ փոփոխությունները երբեք միջին չէին: Դրանք միշտ ծայրահեղ էին: Ժամանակի ընթացքում հասկացա, որ այդ ճանապարհը ինձ բերում է մի պարզ եզրակացության. միայն իրական կարիքով մարդն է մոտենում այն հարցերին, որոնք դուրս են նյութականից: Իմ կյանքի աղքատության փուլում, գիտական որոնման հիմքի վրա, ես մոտեցա այն բացահայտմանը, որը հետագայում դարձավ իմ աշխատանքի առանցքը՝ Աստծո գոյության գիտական ապացույցին: Այդ պահին հասկացա մի պարզ և դաժան բան. պաշտոնը չի պաշտպանում մարդուն: Այն ընդամենը ցույց է տալիս, թե ով է մարդը: Երբ համակարգը սկսում է քանդվել, պաշտոնը առաջինն է կորցնում իր իմաստը: Մնում է միայն այն, ինչ դու իրականում ես:

ԳԼՈՒԽ 9. 21 օրը

1993 թվականն էր: Վանաձորը դեռ նոր էր սովորում իր նոր անունը: Մինչ այդ այն Կիրովական էր՝ մի անուն, որի հետ կապված էին երկրաշարժի ծանր հիշողությունները, փլուզված շենքերը և մարդկանց հոգիների վրա նստած երկար ստվերը: Քաղաքը ապրում էր ոչ միայն ավերածության, այլև ԽՍՀՄ փլուզումից հետո եկած տնտեսական ճնշման մեջ: Աշխատատեղերը կրճատվում էին, ապագան՝ մշուշոտ թվում:

Այդ տարիներին մայրս 64 տարեկան էր: Նա թոշակառու էր, բայց շարունակում էր աշխատել «Ավտոգենմաշ» գործարանին կից մանկապարտեզում՝ որպես բուժքույր: Նրա աշխատանքային ճանապարհը սկսվել էր տասնյոթ տարեկանից, և աշխատանքը վաղուց դարձել էր ոչ միայն զբաղմունք, այլ կյանքի ձև: Ես նոր էի ամուսնացել Մանեի հետ: Մենք ապրում էինք մեկ հարկի տակ՝ մայրս, քույրս, կինս և ես: Տանը նյութական խնդիր չկար, և ես չէի հասկանում, թե ինչու է մայրս շարունակում աշխատել:

Ես հաճախ էի խնդրում նրան.

— Մայրիկ, խնդրում եմ, մի աշխատիր: Ամեն ինչ կարգին է: Ինձ համար հիմա կարևոր է քո առողջությունն ու հանգիստը:

Նա հանգիստ լսում էր և միշտ նույն կերպ պատասխանում.

— Խնդիրը փողը չէ: Ես չեմ կարող չաշխատել: Դա քեզ դժվար է բացատրել: Եվ այս թեմայով այլևս մի խոսիր: Ես շարունակում էի փորձել համոզել նրան՝ հիշելով ուսանողական տարիներս, երբ նա միաժամանակ մի քանի տեղ էր աշխատում, որպեսզի ես կարողանամ սովորել: Մի օր երեք քույրերս՝ Աիդան, Լիլյան, Նելլին, և կինս Մանեն միասին ինձ ասացին:

— Մայրիկին այս հարցով այլևս չանհանգստացնես: Եթե նա աշխատում է, թող աշխատի:

Ասեմ նաև մի բան. մայրիկիս այնքան էին սիրում, որ այդ «կոճիկն» կարծես մասնակցում էր ամբողջ ընտանիքը: Նույնիսկ փեսաներս՝ Վասպուրն ու Վաչիկը, միշտ մայրիկիս կողմն էին: Իսկ փոքրիկները՝ իմ չորս զարմիկները՝ Արտակը, Դավիթը, Արամայիսը և Աննան, չհասկանալով նույնիսկ խոսակցության իմաստը, իրենց մանկական ձևով էին պաշտպանում տատիկին:

Այդ օրվանից ես լռեցի: Զգում էի, որ աշխատանքը նրա համար մի աշխարհ է, որի մի մասնիկն ինքն էր դարձել: Անցավ որոշ ժամանակ: Երբեմն ցերեկը տուն գալով՝ նրան տեսնում էի տանը:

— Մայրիկ, աշխատանքի չե՞ս գնացել: Վատառո՞ղ ես:

— Ոչ, ամեն ինչ կարգին է, — պատասխանում էր նա:

Մի քանի նման դեպքից հետո ես անհանգստացած հարցրեցի կնոջս: Մանեն հանգիստ ասաց՝

— Մայրիկին ազատել են աշխատանքից: Ասել են՝ թոշակառու է:

Ես մոտեցա մորս և փորձեցի մխիթարել նրան՝
բացատրելով օրենքները, գործարանի
դժվարությունները, երիտասարդ կադրերի
անհրաժեշտությունը: Խոսում էի երկար, մինչև լսեցի
նրա համաձայնության այն ծանր հոգոցը, որը վաղուց
էր ապրում իմ հիշողության մեջ: Հիշեցի տորթը: Այդ
պահին սառեցի: Այլևս ոչինչ չասացի: Դուրս եկա տնից
և ուղիղ գնացի «Ավտոգենմաշ» գործարան:

Տնօրենը՝ Հրաչիկ Ղամբարյանը, բացատրեց
իրավիճակը: Ֆինանսական խնդիրներ կային. երկու
բուժքրոջ հաստիքից մեկը պետք է կրճատվեր, և մայրս,
որպես թոշակառու, օրինականորեն ընտրվել էր այդ
կրճատման համար: Ես հասկանում էի այդ
տրամաբանությունը, բայց այն ինձ համար ընդունելի
չէր:

Ես առաջարկեցի տնօրենին, որ կվճարեմ մորս
աշխատավարձը և ևս երեք աշխատակիցների
աշխատավարձ, միայն թե մայրիկիս կրկին հրավիրեն
աշխատանքի՝ արժանապատիվ ձևակերպմամբ: Նա
համաձայնեց: Ես խնդրեցի միայն մեկ բան՝ մայրս
երբեք չպետք է իմանա այս պայմանավորվածության
մասին, և երրորդ անձ նույնպես չպետք է տեղեկանա:
Հաջորդ օրը իմ ընկերությունը գործարանի հետ կնքեց
պայմանագիր՝ որպես անհատույց ֆինանսական
օգնություն:

Մի քանի օր անց զանգեցին մորս և հրավիրեցին
աշխատանքի:

Այդ օրը տուն վերադարձա ուշ՝ գիշերվա մոտ երեքին: Մայրս արթուն էր, որովհետև ինձ էր սպասում: Նա անհավատալի ուրախությամբ ինձ պատմում էր, թե ինչպես են զանգել և ասել, որ մանկապարտեզում իրեն սպասում են, որ իրեն շատ են կարոտել:

Ես լսում էի նրան և հանկարծ նկատեցի մի բան, որը երբեք չեմ մոռանա: Այդ քսանմեկ օրվա ընթացքում, երբ նա տանն էր, մայրս զգալիորեն ծերացել էր: Եվ ես հասկացա՝ աշխատանքից կտրվելը նրան արագ էր ծերացնում:

Այդ պահին ես ինձ խոսք տվեցի, որ այս պատմությունը ոչ ոք չի իմանա: Երկար տարիներ պահեցի այդ խոստումը:

Այսօր, այս գրքի էջերում, առաջին անգամ բացում եմ այդ լուրջությունը՝ սիրուց իմ երջանկահիշատակ մոր հանդեպ:

Մորս մահից հետո ես ինձ որբ զգացի: Նրա անունն էր Կիմա: Այդ օրվանից իմ ծննդյան յուրաքանչյուր օրը սկսվում է նույն ձևով: Առավոտյան վաղ այցելում եմ ծնողներին և այնտեղ վառում եմ տորթի մեկ մոմիկ: Այն փչում եմ՝ ինչպես մանկության տարիներին, հետո նորից վառում և այլևս չեմ փչում: Դա իմ ձևն է միացնելու անցյալը և ներկան, պահպանելու այն լուռ կապը, որը գոյություն ունի ծնողի և երեխայի միջև:

Աշխատանքը մորս համար պարզապես զբաղմունք
չէր: Դա նրա արժանապատվությունն էր, նրա
ներկայությունը աշխարհի մեջ:

Այդ քսանմեկ օրը ինձ սովորեցրեց մի ճշմարտություն,
որը հետագայում դարձավ իմ կյանքի հիմքերից մեկը.
մարդը ապրում է այնքան ժամանակ, որքան իրեն
անհրաժեշտ է զգում:

ԳԼՈՒԽ 10. Բիզնեսը

Ես երկար ժամանակ չէի հասկանում, թե ինչու հաջողությունը կարող է գալ առանց ներքին ուրախության: Արտաքուստ ամեն ինչ կար՝ շարժում, աճ, թվեր, ակտիվներ, անուն, ազդեցություն: Բայց ներսում առաջանում էր մի դատարկություն, որը ոչ մի հաշվարկով չէր լցվում:

Բիզնեսը իմ կյանք մտավ ոչ որպես ազահություն, այլ որպես պատասխան ժամանակի կանչին: Խորհրդային Միության փլուզումից հետո հին համակարգերը քանդվեցին, իսկ նորերը դեռ չէին ձևավորվել: Այդ քաոսում բիզնեսը դարձավ ոչ թե ընտրություն, այլ գոյատևման ձև: Ես ստեղծում էի կառույցներ այնտեղ, որտեղ ոչինչ չկար՝ ոչ օրենք, ոչ կայունություն, ոչ վստահություն:

Ես ռիսկ էի ընդունում, բայց ոչ կույր: Յուրաքանչյուր քայլ հաշվարկված էր, յուրաքանչյուր որոշում՝ մտածված: Այդ ժամանակ ես դեռ մտածում էի մաթեմատիկոսի նման: Բիզնեսը ինձ համար հավասարում էր՝ մուտքեր, ելքեր, ռեսուրսներ, արդյունք: Եվ սկզբում այդ հավասարումները աշխատում էին:

Ըիմնադրվեցին բիզնեսներ: Շարժվեցին մեծ փողեր: Կային հաջողություններ, որոնք դրսից շատ տպավորիչ էին թվում: Բայց որքան մեծանում էր համակարգը, այնքան փոքրանում էի ես: Ես նկատում էի, որ իմ օրը

սկսում է ավարտվել ոչ թե մտածողությամբ, այլ հոգնածությամբ: Ոչ թե հարցերով, այլ թվերով: Եվ այդ թվերը, որքան էլ մեծ լինեին, ներսում ոչինչ չէին փոխում:

Բիզնեսը ունի մի առանձնահատուկ հատկություն. այն արագ է սովորեցնում ուժը, բայց կամաց-կամաց խլում է իմաստը: Դու կարող ես կառավարել հազարավոր մարդկանց, բայց չկարողանալ կառավարել սեփական լռությունը: Կարող ես ստեղծել համակարգեր, բայց կորցնել քո ներքին կառուցվածքը:

Ժամանակի ընթացքում իմ ներսում սկսեց փոխվել բալանսը: Եթե մի ժամանակ ես ապրում էի 90% բիզնեսմեն և 10% գիտնական հարաբերակցությամբ, ապա այդ թվերը սկսեցին շարժվել: Ոչ իմ կամքով և ոչ սխալ նախագծման պատճառով, այլ որովհետև կյանքը սկսեց աշխատել իր օրենքներով: Ֆորմաժորներ, որոնք չէին ենթարկվում հաշվարկին: Իրադարձություններ, որոնց դեմ ռիսկը անիմաստ էր: Ես փորձում էի փրկել բիզնեսը՝ ոչ թե հանուն փողի, այլ հանուն կայունության: Բայց որքան փորձում էի ամրանալ արտաքինում, այնքան ներսում աճում էր զգացումը, որ սա իմ ճանապարհը չէ: Ես չէի փախչում գիտությունից: Ես փորձում էի փախչել աղքատությունից: Բայց ամեն անգամ, երբ մոտենում էի նյութական ապահովվածությանը, ինչ-որ բան անխուսափելիորեն քանդվում էր:

Եվ մի օր ես կանգ առա:

Ես հասկացա, որ բիզնեսը ինձ տվել է շատ բան՝
կազմակերպելու ունակություն, մարդկանց
հասկանալու փորձ, պատասխանատվության
ծանրություն: Բայց այն չէր կարող տալ այն, ինչ ես
իրականում փնտրում էի: Այն չէր կարող
պատասխանել իմ հիմնական հարցին՝ ինչի՞ համար:
Այդ պահին բիզնեսը դադարեց լինել կենտրոն: Այն
մնաց որպես փորձ, որպես փուլ, որպես դաս: Բայց ոչ
որպես ճշմարտություն:

Այդ փորձը իմ մեջ ձևավորեց մի սովորություն՝ հարցերը
չթողնել կիսատ:

Եվ հենց այդ սովորությունն էր, որ ինձ տարավ
գիտության դաշտ:

Եվ հենց այստեղ սկսվեց իմ վերադարձը գիտությանը:
Ոչ որպես կարիերա և ոչ որպես աշխատանք, այլ որպես
միակ տարածք, որտեղ ես դեռ լսում էի իմ ներքին
ձայնը:

ԳԼՈՒԽ 11. Գիտնականը

Ես գիտեի գիտության կանոնները:

Բայց ես դեռ չէի հասկանում, թե ինչ է նշանակում լինել գիտնական այն հարցի առաջ, որը բոլորին անհարմար է:

Ես վերադարձա գիտությանը ոչ որպես հաղթող և ոչ էլ որպես պարտվող: Ես վերադարձա որպես մարդ, որն այլևս չունեի ինչ կորցնելու: Եվ հենց այդ վիճակն է, որ գիտության մեջ երբեմն դառնում է առավելություն:

Այդ պահին իմ ներքին բալանսը վերջնականորեն փոխվեց: Այն, ինչ տարիներ առաջ եղել էր 90% բիզնես և 10% գիտություն հարաբերակցություն, դարձավ 100% գիտություն:

Վերջին յոթ տարիներին ես չունեմ որևէ աշխատանքային եկամուտ: Իմ տարեկան եկամուտը հավասար է զրոյի: Իմ գոյատևումը հնարավոր է դարձել իմ քույրերի օգնությամբ, բժշկուհի դստերս՝ Լիլիթի աջակցությամբ և այն պատասխանատվությամբ, որը ես կրում եմ իմ դեռ անչափահաս որդու՝ Լևոնի համար:

Արտաքուստ սա կարելի է անվանել ծայրահեղ աղքատություն:

Ներսից՝ սա ազատություն էր:

Երբ մարդն այլևս կախված չէ համակարգերից, դրամից, պաշտոնից կամ սպասելիքներից, նրա մտածողությունը

մաքրվում է: Մնում է միայն հարցը: Իսկ իմ հարցը միշտ նույնն էր՝ կա՞ խիստ գիտական ձևով ապացուցելի հիմք, որի վրա կարելի է կանգնեցնել իրականությունը: Ես չեմ ունեցել համաշխարհային անուն: Ես չեմ ունեցել մեծ լաբորատորիաներ, հովանավորներ կամ ակադեմիական ամբիոններ: Բայց ես ունեցել եմ ժամանակ: Եվ լռություն: Եվ համառություն: Այդ երեքը միասին երբեմն ավելի ուժեղ են, քան ցանկացած ինստիտուտ:

Տարիների ընթացքում ես ձևավորեցի մի ապացույց, որը ինձ համար դարձավ ոչ միայն գիտական արդյունք, այլև ներքին հանգրվան: Ես տեսա այն, ինչ մինչ այդ միայն փորձում էի հասկանալ: Դա այն պահն էր, երբ գիտությունը դադարեց լինել մասնագիտություն և դարձավ ճանապարհ:

Ես հասկացա մի պարզ, բայց դաժան ճշմարտություն. դարակազմիկ մեծ գործերը հաճախ ստեղծվել են ոչ թե ճանաչված հեղինակությունների, այլ այն մարդկանց կողմից, որոնց իրենց ժամանակը դեռ չէր ճանաչել: Պատմությունը լի է օրինակներով, երբ «փոքր» մարդիկ են բացել մեծ դռներ: Եվ գրեթե միշտ դա տեղի է ունեցել լռության մեջ:

Որոշ մարդիկ լսում են ներքին ձայներ: Ոչ բոլորը: Եվ ոչ միշտ: Այդ ձայները երբեմն տանում են մարդուն դեպի անտեսվածություն, երբեմն՝ դեպի խենթության պիտակ,

իսկ երբեմն էլ՝ դեպի լեզենդ: Թե ինչպիսին կլինի վերջաբանը՝ դա արդեն ժամանակի գործն է:

Ես խոնարհաբար ընդունեցի այն, ինչ ինձ տրվել էր ի վերուստ: Եթե սա պարզև էր, ապա այն պահանջում էր պատասխանատվություն: Ես որոշեցի այս ամենը չթաքցնել՝ ոչ ինձանից, ոչ էլ ուրիշներից: Այստեղից էլ ծնվեց այս գիրքը:

Ես գիտակցեցի, որ «Աստված գոյություն ունի» հիպոթեզի իմ ապացույցը չի պատկանում միայն ինձ. այն պատկանում է մարդկությանը: Եթե գիտական հենքով իմ ապացույցը ճիշտ է, ապա այն պետք է պատկանի բոլորին: Իսկ եթե սխալ է, ապա նույն կերպ պետք է մերժվի՝ բաց, հրապարակային և գիտական ճանապարհով:

Այս գլուխը չի ավարտվում եզրակացությամբ: Այն ավարտվում է լռությամբ:

Այդ լռության մեջ է ծնվում հաջորդ փորձությունը՝ անտարբերությունը:

ԳԼՈՒԽ 12. Անտարբերությունը

Երբ փորձեցի իմ աշխատանքը մտցնել գիտական համակարգ, առաջին արձագանքը ոչ թե հակափաստարկ էր, այլ լռություն:

Ես պատրաստ էի քննադատության:

Պատրաստ էի հակափաստարկների:

Պատրաստ էի նույնիսկ մերժման:

Բայց ես պատրաստ չէի անտարբերությանը:

Երբ մարդը տարիներ է անցկացնում մի գաղափարի վրա աշխատելով, նա ներքուստ ընդունում է, որ իր աշխատանքը կարող է սխալ լինել: Գիտությունը դա պահանջում է: Բայց նա նաև ենթադրում է, որ եթե աշխատանքը լուրջ է, ապա այն գոնե կլսվի: Իմ դեպքում դա տեղի չունեցավ:

Ես գրեցի նամակներ՝ հայտարարելով, որ

գիտականորեն ապացուցել եմ Աստծո գոյությունը:

Ուղարկեցի նյութեր: Դիմեցի միջազգային գիտական ամսագրերի և ակադեմիական հարթակների՝

հիմնարար ֆիզիկայի և տեսական գիտությունների ոլորտում գործող մասնագիտական շրջանակներին:

Գրեցի նաև մի քանի երկրների ղեկավարների՝

փորձելով բացատրել, որ խոսքը ոչ թե հավատքի, այլ հիպոթեզի խիստ գիտական ապացույցի մասին է: Որ այստեղ կա կառուցվածք, տրամաբանություն,

ստուգելիություն: Որ սա չի փորձում փակել հարցը, այլ բացել այն գիտության համար:

Պատասխանները կամ չկային, կամ չէին վերաբերում բովանդակությանը: Լռություն: Երբեմն՝ հեգնական ժպիտ: Երբեմն՝ անտեսում, որը ավելի բարձր էր խոսում, քան ցանկացած քննադատություն:

Այս գրքի գրելու պահին համագործակցության սպասումը կենտրոնացած է մեկ այլ գիտական ամսագրի հետ հնարավոր կապի վրա: Սակայն անկախ այդ սպասման արդյունքից, արդեն իսկ ընդունված է ներքին որոշում՝ «1000-օր» նախագծի ճանապարհը չկապել որևէ հաստատության կամ պատասխանի հետ:

Միննույն ժամանակ, այս գրքում ներկայացված գիտական կառուցվածքը ձևակերպված է նաև որպես նախահրապարակում (preprint) և հասանելի է բաց մուտքով՝ հանրային և գիտական քննության համար:

DOI: <https://doi.org/10.5281/zenodo.19391220>

ORCID: <https://orcid.org/0009-0002-7149-9577>

Իսկ մինչ 2026 թվականի ապրիլի 5-ի այս օրը, «Աստված գոյություն ունի» հիպոթեզի ապացույցին նվիրված գիտական հոդվածն ուղարկված է եղել մի շարք միջազգային ակադեմիական ամսագրերի, այդ թվում՝

- «Բնություն» (Nature),
- «Սինթեզ» (Synthese),
- «Ֆիզիկայի հիմունքներ» (Foundations of Physics),

- «ԱՄՆ ԳԱԱ աշխատություններ» (Proceedings of the National Academy of Sciences of the United States of America, PNAS),
- «Գիտություն» (Science),
- «Գլոբալ փիլիսոփայություն» (Global Philosophy),
- «Գիտության հիմունքներ» (Foundations of Science):

Ամսագրերին դիմելու գործընթացի և սպասումի պատմությունը գրքի համար արտաքին հանգամանք չէ, այլ դրա ներքին մաս: Այն ցույց է տալիս, որ իմ ցանկությունը զուտ տեսական կամ անձնական հայտարարություն չէ, այլ փորձ՝ մտնելու համաշխարհային գիտական քննարկման դաշտ և ենթարկվելու նույն չափանիշներին, որոնք գործում են ժամանակակից գիտության մեջ:

Եվ այստեղ ես հասկացա, որ անտարբերությունը պաշտպանական մեխանիզմ է: Երբ հարցը չափազանց մեծ է, ավելի հեշտ է չնկատել այն: Ավելի հարմար է ձևացնել, թե այն գոյություն չունի: Ոչ թե որովհետև այն սխալ է, այլ որովհետև այն խախտում է սովորական սահմանները:

Անտարբերությունը չունի դեմք, չունի ձայն, չունի ստորագրություն: Այն չի վիճում: Այն պարզապես չի արձագանքում: Եվ հենց դրա մեջ է նրա ուժը: Այն կարող է երկար տարիներ կանգնեցնել ցանկացած շարժում՝ առանց բացահայտ դիմադրության:

Այդ ընթացքում իմ կյանքում նյութական ոչինչ
չփոխվեց: Ես մնացի նույն վիճակում՝ առանց եկամտի,
առանց համակարգային աջակցության: Բայց ներքին
մի բան փոխվեց: Ես դադարեցի սպասել ընդունման:
Երբ մարդը դադարում է սպասել, նա ազատվում է:
Ես տեսա, որ իմ ճանապարհը այլ է: Ոչ ամբիոններով,
ոչ պաշտոններով, ոչ հաստատություններով: Իմ
ճանապարհը անցնում էր բաց դաշտով՝ այնտեղ,
որտեղ կարող է լսել ցանկացած մարդ, ով պատրաստ
է մտածել: Այդտեղ անտարբերությունը դեռ ուժեղ է,
բայց ոչ անանցանելի:

Եվ այստեղ ես հասկացա մի պարզ բան, որը երկար
ժամանակ չէի ձևակերպում բառերով․ թույլից թույլը
կարող է դառնալ հզորից հզորը: Ոչ այն պատճառով,
որ նա հաղթում է, այլ որովհետև նա այլևս կախված չէ:
Այս գլուխը չի փակվում եզրակացությամբ:

Այն բացում է հաջորդ փուլը:

Այստեղից էլ ծնվում է այն միտքը, որը այլևս հնարավոր
չէ հետաձգել՝ 1000-օրյա մարտահրավերը:

ԳԼՈՒԽ 13. Քվեաթերթիկը

Այդ լռությունից հետո ես որոշեցի խոսել ավելի ուղիղ:
2022 թվականի հունիսի 23-ն էր, ժամը՝ 16:00, քաղաք
Երևան:

Ես հրավիրված էի ՀՀ Գիտությունների ազգային
ակադեմիայի նախագահության նիստին՝ զեկույցով
հանդես գալու:

Թեման Աստծո գոյությունը չէր:

Թեման իմ մեկ այլ աշխատանքի մասին էր՝
միավորների միջազգային չափման համակարգի 8-րդ
հիմնարար միավորը:

Մի փոքր պարզ ասեմ:

Մարդկությունը հազարավոր տարիների ընթացքում
ձևավորել է յոթ հիմնարար միավոր՝ վայրկյան, մետր,
կիլոգրամ, ամպեր, կելվին, մոլ, կանդելա:

Յոթը:

Եվ այդ յոթը ոչ միայն չափման միավորներ են, այլ
քաղաքակրթության հիմքեր:

Ես ասում էի՝ կա ութերորդը:

Եվ դա պարզապես թիվ չէ:

Դա կարող է փոխել շատ բան:

Որովհետև քաղաքակրթությունը փոխվում է միայն այն
ժամանակ, երբ հայտնվում է չափման նոր լեզու:

Դահլիճում նստած էին ակադեմիայի նախագահ
ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, փոխնախագահ

ակադեմիկոս Հրանտ Մաթևոսյանը և ակադեմիայի
մյուս ակադեմիկոս քարտուղարները:

Ես դեռ չէի հասցրել ամբողջությամբ ներկայացնել
թեման, երբ ակադեմիկոս քարտուղար Յուրի
Սուվարյանը, թեման լսելով, վեր կացավ և դուրս եկավ
դահլիճից:

Առանց բացատրության:

Առանց խոսքի:

Ես դա տեսա:

Եվ հասկացա:

Նիստի մթնոլորտը... ասեմ անկեղծ՝ հեշտ չէր:

Ես լավ գիտեի՝ ուր եմ եկել:

Լինելով ոլորտից և լավ պատկերացնելով գիտնականի
աշխարհաքաղաքական պատկերացումն ու
դիրքորոշումը՝ կարող եմ ասել, որ նրանք հանրային
քննարկումների ժամանակ, որպես փորձագետներ, չեն
կարողանում հանդես գալ որպես ճշմարտացի
մասնագետներ, քանի որ իրենց միշտ խանգարում է
իրենց սուպեր էգոն, որը այդ պահին սկսում է խաղալ
քննադատական և բարոյագիտական
դերակատարումով:

Կարճ ասած՝ շատ նախանձ մարդիկ են, ինչը դժվար է
նկատել ուրիշների կողմից:

Ոլորտում չար, նախանձ մարդիկ շատ կան:

Թող ինձ ներեն, բայց ես սիրում եմ ճիշտն ասել:

Նախանձը միշտ ակտիվ է լինում շատ ցածր և շատ բարձր ինտելեկտ ունեցող անձանց մոտ:

Գիտնականի բնությունը այդպիսին է:

Մարդն ինքը բնություն է, իսկ առանց իմաստնության իսելացի մարդը միշտ վայրի բնություն է կրում:

Մի խոսքով, իրենց հետ՝ խմբով խնդիր լուծելու պայմանը, հավասարազոր պայման է թելադրում՝ այն չլուծելուն:

Օրինակ, եթե մի քանի գիտնական պետք է ձևավորեն կոլեգիալ կարծիք մի հայտնագործության շուրջ, և այդ հայտնագործությունը իրենցից չի դուրս եկել, ապա ըստ չգրված օրենքի նրանք սկսում են հակադրվել երևույթին՝ առաջ բերելով պայմաններ, որպեսզի դրանով հաստատեն իրենց կարևորությունը:

Նրանք սկսում են ոչ թե պարզել՝ ճիշտ է թե սխալ, այլ կառուցել իրենց դերը այդ գործընթացում:

Իրենց համար կարևորն այն է, որ իրենք լինեն սկզբում, մեջտեղում և վերջում:

Ես դա գիտեի:

Եվ հենց այդ պատճառով առաջարկեցի մի բան՝ հավասարվել և անցնել ինձ, ինչը փոխեց մթնոլորտը:

Ես առաջարկեցի ինձ գնահատելու քվեաթերթիկ:

Քվեաթերթիկը պարզ տեսքի էր:

Զեկուցող անձը՝ այսինքն ես.

- ✓ Հիմար է — հարկավոր է տեղեկանքով դիմել հոգեբուժարան:
- ✓ Աճաքար է — հարկավոր է տեղեկանքով դիմել դատախազություն:
- ✓ Հիպոթետիկ իրավիճակի խելացի մարդ է — հարկավոր է աշխատանքը դիտարկել և ներկայացնել որպես գիտական մարտահրավեր:

Մի քանի վայրկյան լռություն եղավ:

Ընտո դահլիճում շարժ առաջացավ:

Մարդիկ սկսեցին ոչ միայն լսել, այլ նաև խոսել, զգալ իրավիճակը:

Մթնոլորտը մի փոքր բացվեց:

Քվեաթերթիկը դարձավ հայելի:

Այն հայելի, որտեղ յուրաքանչյուր մարդ տեսնում էր ոչ միայն ինձ, այլ նաև իրեն:

Քննարկումից հետո մի քանի մարդ մոտեցավ ինձ և ասաց, դու գիտես, որ քեզ գնահատելը դժվար է:

— Դու երեքում էլ կաս:

Ես ժպտացի:

Որովհետև դա ճիշտ էր:

Եթե սխալ եմ՝ հիմար եմ:

Եթե գիտակցաբար սխալ եմ ասում՝ աճաքար եմ:

Եթե ճիշտ եմ՝ խելացի եմ:

Բայց մինչև ապացույցը չկա, երեքն էլ միաժամանակ հնարավոր են:

Հանդիպումն ավարտվեց դիպլոմատիկ ձևով:

Արտաքուստ՝ հանգիստ:

Ներսում՝ լարված:

Երբ դուրս էի գալիս, ներկաներից մեկը մոտեցավ ինձ
և ասաց.

— Էյնշտեյնին էլ են ժամանակին ասել՝ կամ հանճար է,
կամ շառլատան: Նա սպասեց տարիներ, մինչև
չհասկացան: Դու էլ սպասիր:

Ես լսեցի:

Ժպտացի:

Բայց ներսումս մի հարց ծնվեց, որին չպատասխանեցի
բարձրաձայն:

Էյնշտեյնը սպասե՞ց:

Թե՞ աշխատեց:

Ես պատասխան չունեի:

Բայց գիտեի մի բան:

Այդ օրը ես հասկացա՝ խնդիրը ոչ թե իմ աշխատանքն
էր, այլ այն, որ հարցը փակ էր:

Ես պետք է աշխատեմ:

Իմ 1000 օրը սպասելու մասին չէ:

Այն աշխատելու մասին է:

Այդ օրը ես հասկացա՝ արդյունքից անկախ, ես արդեն
իմ տեղում եմ:

Մնում էր միայն ճանապարհը բացել:

Այստեղ ծնվեց «1000 օր» գաղափարը:

ԳԼՈՒԽ 14. Կամուրջը

Քվեաթերթիկից հետո ես այլևս չէի կարող ձևացնել, թե ինդիրը միայն իմ աշխատանքի մեջ է:

Ես երկար ժամանակ չէի հասկանում, թե ինչու է իմ ճանապարհը այսպիսին:

Ես չէի փնտրում պայքար:

Ես չէի փնտրում հակասություն:

Ես պարզապես փնտրում էի պատասխան:

Բայց տարիների ընթացքում մի բան դարձավ ակնհայտ:

Իմ ճանապարհը միշտ անցել է կողքով:

Ոչ այն ճանապարհով, որը ընդունված է:

Ես սովորել եմ ոչ այնպես, ինչպես սովորում էին մյուսները:

Ես աշխատել եմ ոչ այնպես, ինչպես սպասվում էր:

Ես մտածել եմ ոչ այնպես, ինչպես ընդունված էր:

Սկզբում թվում էր՝ դա թուլություն է:

Ընտո հասկացա՝ դա ուղղություն է:

Երբ ես վերադարձա գիտությանը, ես արդեն ուրիշ մարդ էի:

Ես չունեի այն, ինչ սովորաբար ունեն գիտնականները՝ կարիերա, պաշտոն, համակարգային աջակցություն:

Բայց ես ունեի այն, ինչը շատ հաճախ չկա՝ ժամանակ, լռություն և ներքին ազատություն:

Եվ այդ ազատության մեջ ծնվեց հարցը:

Ոչ թե հավատքի:

Ոչ թե փիլիսոփայության:

Այլ խիստ ձևակերպված հարց:

Կա՞ արդյոք այնպիսի հիմք, որի վրա կարելի է կանգնեցնել իրականությունը:

Այդ հարցը ինձ բերեց մի եզրակացության:

Եթե Աստված գոյություն ունի, ապա այդ գոյությունը չի կարող մնալ միայն հավատքի դաշտում:

Այն պետք է ունենա տրամաբանական կառուցվածք, գիտական արտահայտելիություն, ստուգելի հետևանքներ:

Այդտեղից ծնվեց հիպոթեզը:

«Աստծո գոյությունը խիստ ապացուցելի է գիտական իմաստով» հիպոթեզը պետք է դառնա գիտական հիպոթեզ:

Սա համոզմունք չէր:

Սա խնդիր էր:

Ես սկսեցի աշխատել:

Տարիներ:

Առանց շտապելու:

Առանց հրապարակելու:

Առանց խոսելու:

Եվ մի պահ եկավ, երբ ես հասկացա, որ ունեմ այն, ինչ փնտրում էի:

Ես գիտության մեջ գտա Աստծուն:

Ոչ ամբողջական պատասխան:

Բայց կառուցվածք, որը կարող է դառնալ ճանաչելի ապացույց:

Այդ պահին բնական ճանապարհը պարզ էր:

Գրել հոդված:

Ուղարկել գիտական ամսագրերի:

Ստանալ գնահատում:

Ես գնացի այդ ճանապարհով:

Ես ուղարկեցի իմ աշխատանքը գիտական ամսագրերի:

Սպասում էի ոչ թե ընդունման, այլ քննադատության:

Բայց պատասխանները նույնն էին:

Չմտան քննարկման մեջ:

Եվ այդ պահին ես հասկացա մի բան:

Խնդիրը իմ աշխատանքը չէր:

Ըարցը փակ էր:

Եվ այստեղ իմ ճանապարհը բախվեց փակ դռների:

Սկզբում ես մտածում էի, որ խնդիրը իմ աշխատանքի մեջ է:

Ըետո՛ր որ խնդիրը ներկայացման մեջ է:

Ըետո՛ր որ պետք է ավելի լավ բացատրեմ:

Բայց երբ պատասխանները նույնաբովանդակ կրկնվեցին, ես սկսեցի հասկանալ, որ խնդիրը ուրիշ տեղում է:

Հարցը չէր մտնում քննարկման դաշտ:

Ոչ թե որովհետև այն սխալ էր, այլ որովհետև այն ընդունված չէր որպես գիտական թեմա:

Եվ այստեղ ես կանգ առա:

Ոչ որպես գիտնական:

Որպես մարդ:

Ես ինքս ինձ հարցրեցի՝

Եթե հարցը չի քննարկվում, ապա ինչպե՞ս պետք է ստուգվի ապացույցը:

Եթե դուռը փակ է, ապա ինչպե՞ս պետք է մտնել ներս:

Եվ այդ պահին պարզ դարձավ մի բան, որը ես սկզբում չէի ուզում ընդունել:

Խնդիրը իմ ապացույցը չէ:

Խնդիրը այն է, որ հարցը փակ է:

Իսկ փակ հարցը չի կարող ստուգվել:

Այդ պահին ընտրությունը պարզ դարձավ:

Կամ ընդունել փակ դռները և լռել:

Կամ ստեղծել մի տարածք, որտեղ դռներ չեն լինի:

Ես ընտրեցի երկրորդը:

Այդ տարածքը դարձավ 1000 օրը:

Ոչ որպես գաղափար:

Որպես անհրաժեշտություն:

Որովհետև եթե հարցը վերաբերում է բոլորին, ապա այն չի կարող մնալ փակ համակարգերում:

Այն պետք է դուրս գա բաց դաշտ:

Այնտեղ, որտեղ յուրաքանչյուր մարդ կարող է լսել, մտածել, և որոշել:

Այդտեղ, որտեղ լռությունն էլ դառնում է պատասխան:

Այդտեղ, որտեղ ապացույցը չի պատկանում հեղինակին, այլ պատկանում է ժամանակին:

Այդտեղ, որտեղ հարցը այլևս չի կարող փակվել:

Ես չէի փնտրում նախագիծ:

Ես փնտրում էի ձև, որտեղ «Աստծո գոյությունը գիտական թեմա է» միտքը կմնա հրապարակային և ստուգելի:

Բայց մինչև գործընթացը սկսվելը, անհրաժեշտ էր հստակեցնել գիտական սահմանը:

Բայց այդ որոշումը մեկ օրում չէր ծնվում:

Դրա առաջին ձևը ես տեսել էի դեռ ավելի վաղ՝ այն օրը, երբ ես կանգնած էի մարդկանց առաջ և առաջարկեցի ինձ գնահատել:

Այդ հանդիպումները ինձ մեկ պարզ բան ցույց տվեցին:

Եթե թեման չի ընդունվում ներսում, այն պետք է բացվի այլ կերպ:



Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՍ IV — ՍԱՀՄԱՆԱԳԻԾ

ԳԼՈՒԽ 15. Ժամանակը

Կա մի պահ, երբ ժամանակը դադարում է լինել թվերի հաջորդականություն:

Այն դառնում է հարց:

Տարիքը սովորաբար չափում են տարիներով: Բայց գալիս է մի պահ, երբ տարիները այլևս ոչինչ չեն ասում: Դրանք պարզապես կանգնած են կողքիդ՝ ոչ որպես հպարտություն, ոչ որպես բեռ, այլ որպես վկայություն:

Ես սկսեցի հետ նայել:

Ոչ նոստալգիայով:

Ոչ ափսոսանքով:

Այլ պարզ, գրեթե սառը դիտարկումով:

Ինչ է արվել:

Ինչը՝ ոչ:

Ինչն էր անհրաժեշտ, և ինչը՝ պարզապես

ճանապարհի գինը:

Երբ մարդը երկար է ապրում մի գաղափարի հետ, նա դադարում է հաշվել, թե քանի տարի է անցել: Նա սկսում է հաշվել, թե արդյոք ասել է այն, ինչ պարտավոր էր ասել:

Այդ գաղափարը վերաբերում էր մի հարցի, որը հազարամյակներ փակ է համարվել գիտության համար՝ Աստծո գոյության հարցին:

Այդ պահին ծնվում է ամենածանր հարցը:

Ոչ գիտական:

Ոչ փիլիսոփայական:

Բարոյական:

Իսկ եթե չասեմ:

Եթե թողնեմ, որ այս ամբողջը մնա իմ ներսում:

Եթե ընտրեմ լռությունը՝ ոչ վախից, այլ հոգնածությունից:

Այստեղ ժամանակը դառնում է դատավոր: Ոչ այն պատճառով, որ քիչ է մնացել, այլ որովհետև այն այլևս չի ներելու լռությունը:

Ես հասկացա, որ տարիքը չի սահմանափակում խոսելու իրավունքը: Այն սահմանափակում է հետաձգելու հնարավորությունը: Այն, ինչ կարելի էր չասել քսան տարեկանում, դառնում է աններելի չասված վաթսունում:

Այս գլուխը անցյալի մասին չէ: Այն ապագայի մասին է, որը կարող է չլինել, եթե հարցը մնա անտարբերության մեջ: Եվ այստեղ, ժամանակի հետ այս լուռ երկխոսության մեջ, որոշումը դեռ չի ընդունվում, Բայց արդեն անհնար է այն չընդունել:

Այս գլուխը պատասխան չի տալիս:

Այն տալիս է սահման:

Այն սահմանը, որից հետո լռությունը դառնում է
ընտրություն:

ԳԼՈՒԽ 16. Լռությունից դուրս

Կա մի պահ, երբ մարդը հասկանում է՝ փակ դռները
չեն բացվում:

Դրանք կարելի է թակել:

Կարելի է սպասել:

Կարելի է հույս ունենալ, որ մի օր կլսեն և
կարձազանքեն:

Բայց գալիս է մի պահ, երբ պարզ է դառնում՝
լռությունը պատահական չէ: Այն ընտրություն է:

Ես երկար ժամանակ փորձում էի խոսել այն լեզվով,
որը ընդունված է փակ համակարգերում՝ ճշգրիտ
ձևակերպումներ, զգուշավոր եզրահանգումներ,
ակադեմիական սահմաններ:

Բայց հարցը, որի շուրջ ես աշխատել էի, չէր
տեղավորվում միայն մասնագիտական շրջանակներում:
Եթե համակարգերը չեն արձագանքում, հարցը դուրս է
գալիս այդ սահմաններից դեպի հանրային դաշտ:
Որովհետև խոսքը վերաբերում էր ոչ միայն գիտությանը,
այլ մարդուն:

Խոսքը վերաբերում էր Աստծո գոյությանը:

Ոչ որպես հավատքի առարկա, այլ որպես խիստ
գիտական հարց, որի պատասխանն ուղղակիորեն
հետաքրքիր է ցանկացած մտածող մարդու:

Եթե Աստված գոյություն ունի, ապա դա չի կարող լինել
միայն աստվածաբանների կամ հավատացյալների

թեման: Դա վերաբերում է ֆիզիկային,
մաթեմատիկային, տրամաբանությանը և, վերջիվերջո,
յուրաքանչյուր մարդու աշխարհընկալմանը:

Եվ հենց այստեղ ես հասկացա, որ փակ
համակարգերը չեն արձագանքում ոչ այն պատճառով,
որ հարցը թույլ է, այլ որովհետև այն չափազանց լայն է:

Այն չի տեղավորվում բաժինների մեջ:

Այն չի պատկանում մեկ ամբիոնի:

Այն չի կարող մնալ մի քանի մասնագետների ներսում:

Այդ պահին պարզ դարձավ՝ եթե խոսքը վերաբերում է
բոլորին, ապա ճանապարհը նույնպես պետք է լինի
բոլորի համար բաց:

Լռությունից դուրս գալը ինձ համար նշանակում էր ոչ
թե գիտությունից հեռանալ, այլ գիտությունը
վերադարձնել իր սկզբնական դերին՝ հարց տալու
իրավունքին:

Հանրային ճանապարհը դարձավ ոչ թե այլընտրանք,
այլ անհրաժեշտություն:

Ոչ քարոզելու համար:

Ոչ համոզելու համար:

Այլ բացելու մի տարածք, որտեղ ցանկացած մարդ
կարող է լսել, մտածել և դիրքորոշում ունենալ:

Ես գիտակցեցի, որ եթե այս ապացույցը ունի ներքին
ուժ, ապա այն չի վախենա հանրային բաց
քննարկումից: Այն չի վախենա կասկածից: Այն չի

վախենա նույնիսկ մերժումից: Այն միայն չի կարող
գոյություն ունենալ լռության մեջ:

Այստեղ է, որ լռությունը ավարտվում է:

Բայց պատասխանը դեռ չի տրվում:

Պատասխանը պահանջում է ժամանակ:

Պահանջում է ընթացք:

Պահանջում է փորձություն:

Այդտեղից էլ ծնվում է հաջորդ քայլը:

Ոչ որպես ակցիա:

Ոչ որպես հայտարարություն:

Այլ որպես սահմանված ճանապարհ, որտեղ հարցը չի
փակվում, այլ պահվում է բաց՝ ժամանակի մեջ:

Այդ ճանապարհի չափը դարձավ հստակ:

1000 օր:

ԳԼՈՒԽ 17. Գիտական սահմանը

Գիտությունը սկսվում է ոչ թե պատասխաններից, այլ սահմաններից:

Այն պահից, երբ մարդը փորձում է Աստծո մասին խոսել գիտական լեզվով, նա հայտնվում է մի սահմանագծի վրա, որտեղ շատերը կանգ են առնում: Ոմանք ասում են՝ «Աստված գիտության թեմա չէ»:

Մյուսները՝ «Գիտությունը չի կարող հասնել այդ հարցին»: Բայց նման պնդումները նույնպես պահանջում են հիմնավորում: Որովհետև եթե ինչ-որ բան գոյություն ունի իրականության մեջ, ապա սկզբունքորեն այն պետք է ունենա նկարագրվող, վերլուծվող և ստուգելի հետևանքներ:

«Աստծո գոյության» հիպոթեզը կարող է ձևակերպվել որպես գիտական հիպոթեզ:

Խոսքը Աստծո գոյության մասին է՝ ոչ որպես հավատքի պահանջ, այլ որպես գիտական հիպոթեզ: Իսկ գիտության մեջ հիպոթեզը չի մերժվում այն պատճառով, որ այն մեծ է կամ անհարմար: Այն կամ ստուգվում է, կամ մնում է բաց հարց, մնալով որպես գիտական հոդված:

Այս գրքում ներկայացված ճանապարհը սկսվում է հենց այստեղից: Այն չի փորձում ապացուցել Աստծուն զգացմունքներով: Այն չի դիմում հեղինակություններին և չի խնդրում հավատալ: Այն փորձում է ձևակերպել մի

պարզ, բայց խիստ պահանջ. եթե Աստված գոյություն ունի, ապա այդ գոյությունը պետք է ունենա լոգիկական և գիտական արտահայտելի կառուցվածք: Այստեղ անհրաժեշտ է գիտական լեզուն՝ ոչ իր տեխնիկական ծանրությամբ, այլ որպես կարգապահություն: Այդ մտածողությունը ստեղծված է մեկ նպատակով՝ մարդը չխաբի ոչ ուրիշներին, ոչ ինքն իրեն:

Այս գրքում ներկայացվածը գիտական հողվածի փոխարեն չէ: Այն նրա նախաշեմն է: Ընթերցողը տեսնում է, թե ինչ ճանապարհով է ձևավորվել հիպոթեզը, ինչ հարցերից է այն ծնվել և ինչ ներքին կարգապահություն է պահանջել այդ ճանապարհը: Խոսքը ոչ թե հավատքի պաշտպանության մասին է, այլ գիտական հավակնության:

Այս աշխատանքի հիմքում ընկած գիտական հողվածը ձևակերպում է մի պարզ ելակետ. մարդկությունը չունի ընդհանուր ընդունված խիստ գիտական ապացույց Աստծո գոյության վերաբերյալ: Սա կարծիք չէ, այլ փաստ: Եվ հենց այդ փաստն է, որ այս փորձը դարձնում է ոչ միայն թույլատրելի, այլ անհրաժեշտ:

Առաջարկվում է հիպոթեզ, ըստ որի՝ Աստծո գոյությունը կարող է ստանալ խիստ գիտական հիմնավորում տրամաբանական անհրաժեշտության միջոցով: Այստեղ ընթերցողից ոչինչ չի պահանջվում

ընդունել նախապես: Նրան առաջարկվում է միայն հետևել տրամաբանության ընթացքին:

Այս մոտեցումը վտանգավոր է ոչ այն պատճառով, որ սխալ է, այլ որովհետև այն մտնում է մի տարածք, որտեղ երկար ժամանակ գերիշխել է լռությունը:

Այստեղ է գիտական սահմանը՝ այն կետը, որտեղ գիտությունը պետք է պատասխան տա ոչ թե նրան, թե ինչին է հավատում մարդը, այլ նրան, թե ինչն է անհրաժեշտ իրականության ամբողջական նկարագրության համար:

Այս գլուխը չի տալիս ապացույցը: Այն ցույց է տալիս, որ ապացույցը ունի գիտական ձև: Այն պատրաստում է ընթերցողին ոչ միայն հասկանալու, այլ բարձրանալու այն ներքին գիտակցական մակարդակ, որտեղ մեծ հարցերը այլևս չեն վախեցնում:

Այստեղ ավարտվում է ձևակերպումը, և սկսվում է գործընթացը:

Այդ գործընթացը չի կարող լինել կարճ: Այն չի կարող լինել փակ: Այն պահանջում է ժամանակ:

Եվ հենց այդ պատճառով հաջորդ քայլը չէր կարող լինել պարզապես հողված կամ հայտարարություն: Այն պետք է դառնար ժամանակի մեջ բաց փորձություն:

1000 օրվա գալիք պատմություն:

Այդ գործընթացը հասկանալու համար անհրաժեշտ է նաև հասկանալ ապացույցի կառուցվածքը:

Հնարավոր է, որ Աստծո գոյությունը ունենա
գիտական ապացույց:

Եթե այդ ապացույցը գոյություն ունի, ապա խոսքն
արդեն միայն հավատքի մասին չէ:

Խոսքը ճշմարտության մասին է:

Եվ այստեղ յուրաքանչյուրի մոտ բնական հարց է
առաջանում:

Իսկ եթե սա՞ ճիշտ է:

«Ես ուզում եմ տեսնել՝ արդյոք դա ճիշտ է»:

ԳԼՈՒԽ 18. Ապացույցի կառուցվածքի ուրվագիծը

Այս բաժնում ես դեռ չեմ ներկայացնում ամբողջ
ապացույցը:

Ես ներկայացնում եմ դրա կմախքը՝ այն հիմքը, որի
վրա ապացույցը կանգնած է: Սա անհրաժեշտ է,
որպեսզի ընթերցողը հասկանա մեկ կարևոր բան.
խոսքը ոչ թե գաղափարի կամ հավատքի մասին է, այլ
կառուցված գիտական աշխատանքի:

Ապացույցը այստեղ դիտարկվում է որպես համակարգ:
Իսկ ցանկացած համակարգ, նախքան իր
բովանդակությունը բացելը, պետք է ցույց տա իր
կառուցման սկզբունքը:

Ինչ խնդիր է լուծվում

Հիմնական պնդումը ձևակերպված է պարզ. Աստծո
գոյությունը կարող է ստանալ խիստ գիտական
ապացույց:

Սա չի ներկայացվում որպես համոզմունք:

Սա ներկայացվում է որպես հիպոթեզ, որը պետք է
դիմանա ստուգման:

Գիտական ապացույց ասելով այստեղ հասկանում ենք
մի բան, որն ունի երեք հատկանիշ. հստակ
ելակետային դրույթներ, հաջորդական

տրամաբանական զարգացում, բաց և անկախ
ստուգման հնարավորություն:

Եթե այս երեք պայմանները կատարված են, ապա
մենք գործ ունենք գիտական օբյեկտի հետ:

Ինչպես է կառուցված ապացույցը

Ապացույցը կառուցված է շերտերով:

Առաջին շերտը հիմքն է:

Այստեղ ձևակերպվում են նվազագույն դրույթները,
որոնց վրա կարելի է կանգնեցնել ամբողջ
կառուցվածքը: Դրանք ընտրված են այնպես, որ լինեն
պարզ և ստուգելի:

Երկրորդ շերտը տրամաբանական ընթացքն է:

Այստեղ ապացույցը զարգանում է քայլ առ քայլ:

Յուրաքանչյուր քայլ կարելի է ստուգել առանձին՝
առանց ամբողջ կառուցվածքին վստահելու:

Երրորդ շերտը եզրակացությունն է:

Սա վերջնական պնդումն է, որը չի հայտարարվում
որպես կարծիք, այլ առաջանում է ամբողջ

կառուցվածքից որպես անհրաժեշտ արդյունք:

Ինչու է սա կարևոր

Այս կառուցվածքը թույլ է տալիս ապացույցը
քննադատել և ստուգել առանց փակ տարածքների:

Եթե որևէ հատված սխալ է, այն կարելի է ցույց տալ:

Եթե կառուցվածքը դիմանում է քննությանը, ապա դրա ուժը գալիս է ոչ թե հեղինակությունից, այլ ձևական ճշտությունից:

Սա է պատճառը, որ ապացույցը նախատեսված է բաց հրապարակման և միջազգային ստուգման համար:

Ինչ է տալիս այս բաժինը ընթերցողին

Այս բաժինը քարտեզ է:

Այն չի պահանջում համաձայնություն:


Այն առաջարկում է հասկանալ, թե ինչի հետ գործ ունենք:

Ընթերցողը տեսնում է, որ խոսքը վերաբերում է կառուցված գիտական համակարգի, որը պատրաստ է անցնել բաց փորձություն ժամանակի մեջ:

Մնացածը որոշելու է ոչ թե գիրքը, այլ գործընթացը:

Իսկ եթե այս հարցը կարող է ունենալ գիտական պատասխան, ապա այն չի կարող մնալ փակ:

Այն պետք է ստուգվի հանրային դաշտում:



ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՄԱՍ VI — 1000 օրը

ԳԼՈՒԽ 19. 1000 օրը

Այս գլուխը ծնվում է մի պարզ, բայց անշրջելի գիտակցումից. մեծ հարցերը չեն լուծվում փակ սենյակներում:

Եթե խոսքը վերաբերում է Աստծո գոյությանը և առավել ևս դրա խիստ գիտական ապացույցին, ապա այդ հարցը չի պատկանում ոչ մի ինստիտուտի, ոչ մի ամսագրի, ոչ մի ակադեմիական խմբի: Այն պատկանում է բոլորին:

Այստեղից է ծնվում 1000 օրվա գաղափարը:

Ոչ որպես ակցիա:

Ոչ որպես քարոզ:

Ոչ որպես հասարակական շարժում:

Այլ որպես բաց գիտական փորձություն ժամանակի մեջ:

1000 օրը նախատեսված է որպես միջազգային, բաց և մրցակցային գիտական գործընթաց, որտեղ արդյունքը որոշվում է ոչ թե հեղինակությամբ, այլ ձևական ճշտությամբ: Այս ընթացքում ցանկացած գիտնական, համալսարան կամ հետազոտական խումբ կարող է ներկայացնել ապացույց կամ հերքում:

Ոչ գաղտնի:

Ոչ արտոնյալ պայմաններով:

Ոչ փակ կանոններով:

Եթե այլընտրանքային ապացույցներ չկան, ապա հեղինակի ապացույցը բացվում է ամբողջությամբ: Եթե կա մրցակցային լուծում, բոլոր տարբերակները ենթարկվում են նույն ստուգմանը: Սա գիտության դասական իդեալն է՝ տեղափոխված իր առավել մաքուր և անզիջում ձևի մեջ:

Բայց այստեղ կա մի սահման, որի մասին գիտությունը հաճախ լռում է:

Գիտական գործընթացը ունի գին:

Ոչ գաղափարական:

Ոչ բարոյական:

Այլ բառացի՝ նյութական:

Բաց միջազգային ստուգումը պահանջում է անկախ ակադեմիական արբիտրաժ, վերլուծական և հաշվարկային ենթակառուցվածք, իրավական և կառավարման հստակ շրջանակ, ինչպես նաև հանրային հաղորդակցություն և բաց մատչելիություն:

Սա մրցանակ չէ: Սա հետազոտական միջավայր է աշխարհի ամենախորը հարցերից մեկի համար:

Այդտեղից առաջանում է հովանավորի գաղափարը:

Ոչ որպես աջակցություն հեղինակին, այլ որպես մասնակցություն քաղաքակրթական գործընթացին:

Հովանավորը չի որոշում արդյունքը:

Չի միջամտում բովանդակությանը:

Չի ձևավորում եզրակացությունը:

Նրա դերը մեկն է՝ ապահովել, որ ճշմարտության ստուգումը լինի ամբողջական, բաց և անխաթար:

Եթե այս գործընթացը հաջողվի, մարդկության պատմության մեջ առաջին անգամ Աստծո գոյության հարցը կտեղափոխվի հավատքի և փիլիսոփայության դաշտից դեպի խիստ գիտական ստուգելիության հարթակ: Եթե այն ձախողի, դա նույնպես կլինի գիտական արդյունք:

1000 օրը ոչ մի կողմ չի պաշտպանում: Այն պաշտպանում է միայն մեկ բան՝ ճշմարտության իրավունքը անցնել ժամանակի միջով:

Այս գլուխը ոչ խոստում է, ոչ մանիֆեստ, ոչ սպառնալիք: Սա սահմանագիծ է: Այստեղից հետո հարցը այլևս սա չէ՝ կընդունե՞ն արդյոք ապացույցը: Այստեղից հետո հարցը սա է. պատրաստ է արդյոք աշխարհը այն բաց, հրապարակային և գիտականորեն ստուգել:

ԳԼՈՒԽ 20. Ավարտ. ոչ լուծում, այլ կանչ ընթերցողին

Այս գիրքը չի ավարտվում պատասխանով: Այն ավարտվում է հարցով, որն այժմ այլևս միայն իմը չէ: Եթե Աստծո գոյությունը կարող է խիստ գիտականորեն ապացուցվել, ապա այդ փաստը չի պատկանում հեղինակին: Այն չի պատկանում որևէ դպրոցի կամ հավատքի համակարգի: Այն պատկանում է յուրաքանչյուր մարդու:

Ես կատարել եմ իմ մասը:

Ես ձևակերպել եմ հիպոթեզ՝ «Աստծո գոյությունը խիստ ապացուցելի է գիտական իմաստով»:

Այս պնդումը հակադրվում է այսօր տարածված դիրքորոշմանը, համաձայն որի գիտականորեն անհնար է ապացուցել կամ հերքել Աստծո գոյությունը, քանի որ գիտությունն ուսումնասիրում է նյութական և ստուգելի աշխարհը, իսկ Աստված, ըստ սահմանման, գերբնական և աննյութական էակ է:

Այդ պատճառով հարցը սովորաբար դուրս է դիտվում գիտական մեթոդի շրջանակներից՝ մնալով փիլիսոփայության, աստվածաբանության և անձնական հավատքի ոլորտում:

Ես կառուցել եմ իմ հիպոթեզի ապացույցի ճանապարհը և բացել այն հանրային ստուգման համար: Այստեղից հետո սկսվում է մի տարածք, որտեղ որոշողը այլևս մեկ

մարդ չէ: Որոշողը ժամանակն է: Եվ ժամանակի միջով
անցնող մարդիկ:

Ես չեմ խնդրում հավատալ:

Գիտությունը հավատ չի պահանջում:

Այն պահանջում է ուշադրություն, քննություն և ազնիվ
մտածում:

Եթե այս գիրքը ձեր ձեռքերում է, դա նշանակում է, որ
դուք արդեն դարձել եք այս գործընթացի մասնակիցը:

Դուք կարող եք կարդալ և փակել այն:

Կարող եք համաձայնել կամ չհամաձայնել:

Բայց կա երրորդ ճանապարհը՝ ամենադժվարը և
ամենակարևորը:

Դա մասնակցելն է:

Մասնակցել՝ հարց տալով:

Մասնակցել՝ քննարկելով:

Մասնակցել՝ փոխանցելով այս գաղափարը ուրիշներին:

Որովհետև եթե այստեղ խոսքը իրականության
հիմնարար կառուցվածքի մասին է, ապա լռությունն էլ
է դառնում դիրքորոշում:

1000-օրյա բաց գործընթացը կոչ է ոչ միայն
գիտնականներին, այլ յուրաքանչյուր մարդու, ով
պատրաստ է ընդունել, որ մեծ հարցերը պահանջում
են մեծ համարձակություն:

Այս գիրքը չի ասում՝ «վերջ»:

Այն ասում է՝ «այժմ ձեր հերթն է»:

ՄԱՍ VII — ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԳԼՈՒԽ 21. Գործընթաց

Գործընթացը այն կետն է, որտեղ գաղափարը դադարում է լինել միայն ձևակերպում և դառնում է գործողություն ժամանակի մեջ:

Այստեղ արդեն կարևոր չէ միայն՝ ինչ է ասվում, այլ՝ ինչպես է այն ստուգվում:

Այս գրքում ներկայացված մոտեցումը չի սահմանափակվում տեսական պնդմամբ: Այն պահանջում է ընթացակարգ, որտեղ յուրաքանչյուր պնդում անցնում է նույն խիստ ստուգման փուլերով:

Գործընթացը կառուցված է երեք հիմնարար սկզբունքների վրա՝ բացություն, հավասարություն և ստուգելիություն:

Բացություն՝ նշանակում է, որ գործընթացի որևէ փուլ փակ չէ:

Բոլոր նյութերը, հաշվարկները և հիմնավորումները հասանելի են հանրությանը:

Հավասարություն՝ նշանակում է, որ ոչ մի մասնակից չունի առավելություն՝ ոչ հեղինակության, ոչ ինստիտուցիոնալ դիրքի, ոչ ռեսուրսների հիմքով:

Ստուգելիություն՝ նշանակում է, որ յուրաքանչյուր քայլ կարող է վերարտադրվել և անկախ ստուգվել:

Այս երեք սկզբունքները միասին ձևավորում են միջավայր, որտեղ որոշումը չի կախված կարծիքից, այլ կախված է կառուցվածքից և ճշտությունից:

Գործընթացը ունի հստակ փուլային կառուցվածք:

Առաջին փուլում ներկայացվում է պնդումը և դրա ամբողջական տրամաբանական կառուցվածքը:

Երկրորդ փուլում բացվում են բոլոր հաշվարկները և հիմնավորումները:

Երրորդ փուլում սկսվում է անկախ ստուգումը՝ տարբեր մասնակիցների կողմից:

Չորրորդ փուլում համադրվում են արդյունքները և ձևակերպվում է եզրակացությունը:

Այս կառուցվածքը թույլ է տալիս բացառել պատահականությունը և նվազեցնել սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

Բայց գործընթացը միայն մեխանիզմ չէ:

Այն նաև պատասխանատվություն է:

Յուրաքանչյուր մասնակից պատասխանատու է ոչ միայն իր ներկայացրած արդյունքի, այլ նաև ամբողջ գործընթացի մաքրության համար:

Սա այն կետն է, որտեղ գիտությունը դառնում է ոչ միայն մեթոդ, այլ նաև մշակույթ:

Գործընթացը ժամանակ է պահանջում:

Ոչ որովհետև այն դանդաղ է, այլ որովհետև ճշտությունը չի արագացվում առանց կորուստների:

Այստեղ արդյունքը չի ծնվում արագության հաշվին:

Այն ձևավորվում է դիմացկունության հաշվին:

Այս բաժինը սահմանում է խաղի կանոնները:

Ոչ թե որպեսզի սահմանափակի, այլ որպեսզի
ապահովի, որ արդյունքը լինի վստահելի:

Ընարավո՞ր է, որ Աստծո գոյությունը ունենա
գիտական ապացույց:

Եթե այդ ապացույցը գոյություն ունի, ապա խոսքը
արդեն միայն հավատքի մասին չէ:

Խոսքը ճշմարտության մասին է:

Եվ այստեղ յուրաքանչյուրի մոտ բնական հարց է
առաջանում:

Իսկ եթե սա՞ ճիշտ է:

«Ես ուզում եմ տեսնել՝ արդյոք դա ճիշտ է»:

ԳԼՈՒԽ 22. Ինչ է առաջարկվում

Եթե այս հարցը կարող է ունենալ գիտական պատասխան, ապա այն պետք է ստուգվի հանրային դաշտում:

Այս գիրքը ավարտվում է ոչ թե եզրակացությամբ, այլ առաջարկով:

Ես առաջարկում եմ մի բան, որը սովորական գիտական հրապարակում չէ և ոչ էլ PR ակցիա է: Ես առաջարկում եմ բաց, ժամանակով սահմանափակ համաշխարհային գիտական գործընթաց, որի նպատակը մեկն է՝ ստուգել մի հիպոթեզ, որը մարդկությունը հազարամյակներ շարունակ չի կարողացել լուծել. «Աստծո գոյությունը խիստ ապացուցելի է գիտական իմաստով»:

Այս մարտահրավերը կոչվում է 1000-օրյա բաց ստուգման գործընթաց:

Այն կառուցված է պարզ սկզբունքի վրա.

ճշմարտությունը որոշվում է ոչ թե հեղինակությամբ, այլ ապացույցի ձևական ճշտությամբ:

1000 օրվա ընթացքում աշխարհի ցանկացած գիտնական, համալսարան կամ հետազոտական խումբ կարող է ներկայացնել հիպոթեզի ապացույց կամ դրա հերքում: Բոլոր ներկայացված աշխատանքները ենթակա են անկախ ակադեմիական ստուգման: Եթե այդ ընթացքում ոչ մի մրցակցային ապացույց չի հաստատվում, ես հրապարակում եմ իմ

ամբողջական ապացույցը՝ նույն բաց կանոններով վերջնական ստուգման համար: Եթե նույնիսկ որևէ այլ ապացույց հաստատվում է, իմ ապացույցը նույնպես հրապարակվում է՝ համեմատական վերլուծության համար:

Այս գործընթացը մրցույթ չէ սովորական իմաստով: Այն PR ակցիա չէ: Այն ոչ էլ հավատքի քարոզ է: Սա կառուցված գիտական փորձություն է, որտեղ մարդկությունը առաջին անգամ հավաքականորեն փորձում է պատասխանել մի հարցի, որը միշտ համարվել է գիտությունից դուրս գտնվող՝ կարո՞ղ է արդյոք գոյության հիմնարար պատճառը ստանալ խիստ գիտական ձևակերպում:

Եթե պատասխանը դրական է, ապա սա կլինի քաղաքակրթական մակարդակի իրադարձություն: Եթե բացասական է, ապա մենք առնվազն կունենանք հստակ սահման, թե որտեղ է ավարտվում գիտության լեզուն: Երկու դեպքում էլ մարդկությունը շահում է:

Այս առաջարկը նույնպես ունի իր կառուցվածքը:

Այս փուլում գործընթացը ոչ միայն հայտարարվում է, այլ նաև մասամբ բացվում է:

Այս գրքում ես ներկայացնում եմ ապացույցի մի մասը, ոչ որպես դրա ամբողջական հրապարակում, այլ որպես այն կառուցվածքի տեսանկյունից հատված, որի վրա հիմնված է ամբողջական ապացույցը:

Սա բավարար է հասկանալու համար, որ այս գրքում արված պնդումը պարզապես ենթադրություն չէ, այլ իրական գիտական աշխատանքի արդյունք:

Այս գրքում ներառված գիտական հոդվածը նույն աշխատանքն է, որն արդեն ներկայացվել է միջազգային գիտական ամսագրերին՝

հրապարակման համար:

Ապացույցի ամբողջական տարբերակը կներկայացվի բաց ստուգման գործընթացի ընթացքում, որտեղ այն կքննվի նույն պայմաններով, ինչպես ցանկացած այլ գիտական արդյունք:

ԳԼՈՒԽ 23. Ինչ է պահանջվում

Այս նախագիծը չի կարող գոյություն ունենալ միայն գաղափարի մակարդակում: Այն պահանջում է կառուցվածք, պատասխանատվություն և հրապարակային հստակություն:

1000-օրյա մարտահրավերը իր էությամբ նետված ձեռնոց է գիտական հանրությանը:

Հարցը ձևակերպված է պարզ և բաց. կա՞րողյոք խիստ գիտական ապացույց, որը հաստատում է «Աստված գոյություն ունի» հիպոթեզը:

Եթե նման ապացույց գոյություն ունի, այն պետք է կարողանա դիմանալ բաց և անկախ ստուգման: Եթե չի դիմանում, հարցը մնում է բաց: Այս ձեռնոցը նետվում է ոչ թե մրցակցության համար, այլ պարզության համար:

Գործընթացը սկսվում է հրապարակային հայտարարությամբ: Տպագրվում և տարածվում են բաց հոդվածներ, որոնք ձևակերպում են առաջ քաշված հիպոթեզը որպես բաց գիտական խնդիր: Այդ պահից սկսած, ցանկացած հետազոտող կամ գիտական խումբ իրավունք ունի ներկայացնելու իր ապացույցը:

Ներկայացումները ուղղվում են անկախ ակադեմիական արբիտրի՝ հեղինակավոր միջազգային համալսարանի: Առաջարկվող տարբերակներից մեկը Քեմբրիջի համալսարանն է, եթե այն համաձայնի ստանձնել այդ դերը: Համալսարանը գործում է որպես առցանց

անկախ ստուգման հարթակ, որտեղ բոլոր ներկայացված աշխատանքները գրանցվում և ստուգվում են թափանցիկ կանոններով:

1000 օրվա ընթացքում ընդունվում են բոլոր մրցակցային գիտական աշխատությունները: Ժամանակահատվածի ավարտին, անկախ արդյունքից, հեղինակը հրապարակում է իր ամբողջական ապացույցը նույն բաց կանոններով՝ վերջնական ստուգման համար:

Այս կառուցվածքը պահանջում է հովանավորի մասնակցություն: Հովանավորը չի միջամտում գիտական բովանդակությանը: Նրա դերը կազմակերպչական է՝ ստեղծել այն պայմանները, որոնցում հնարավոր է իրականացնել բաց և անկախ ստուգումը: Սա ներառում է տեխնիկական ենթակառուցվածք, իրավական հարթակ, միջազգային հաղորդակցություն և գործընթացի ֆինանսական ապահովում:

Հովանավորը դառնում է ոչ թե գաղափարի սեփականատեր, այլ այն միջավայրի ստեղծողը, որտեղ հնարավոր է իրականացնել ստուգումը: Նրա անունը կապվում է պատմական գործընթացի հետ, բայց ոչ ապացույցի բովանդակության հետ:

Այս գլխի իմաստը պարզ է. մեծ հարցերը պահանջում են ոչ միայն մեծ գաղափարներ, այլ նաև մեծ պատասխանատվություն և կազմակերպվածություն:

ԳԼՈՒԽ 24. Ով կարող է միանալ

Այս նախագիծը փակ համայնքի համար չէ: Այն կառուցված է մի պարզ գաղափարի վրա. եթե հարցը վերաբերում է գոյության հիմքերին, ապա դրան մասնակցելու իրավունքը պատկանում է բոլորին:

Առաջինը՝ գիտնականը:

Այս գործընթացի կենտրոնում գիտական աշխատանքն է: Գիտնականը կարող է միանալ որպես հետազոտող՝ ներկայացնելով ապացույց, քննադատություն կամ վերլուծություն: Այստեղ կարևոր չէ կարգավիճակը, կոչումը կամ հաստատությունը: Կարևոր է միայն աշխատանքի ձևական ճշտությունը և մտքի ազնվությունը:

Երկրորդը՝ կազմակերպիչը:

Այսպիսի նախագիծը պահանջում է մարդկանց, ովքեր կարող են կառուցել կամուրջներ համալսարանների, հաստատությունների և հասարակության միջև: Կազմակերպիչը մասնակցում է ոչ թե բովանդակությամբ, այլ ստեղծում է այն միջավայրը, որտեղ բովանդակությունը կարող է ստուգվել և քննարկվել:

Երրորդը՝ ընթերցողը:

Ընթերցողը պասիվ դիտորդ չէ: Ամեն մարդ, ով կարդում է այս գիրքը կամ լսում է այս գաղափարի մասին, դառնում է տեղեկության փոխանցող: Մեծ

գործընթացները հաճախ սկսվում են ոչ թե ամբիոններից, այլ մարդկանց միջև ընթացող խոսակցություններից:

Եվ կա ևս մեկ դեր, որը դուրս է սովորական դասակարգումից:

Դա հովանավորն է:

Հովանավորը կարող է լինել աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկը՝ սկսած ժամանակի ամենահարուստ մարդուց, ով կարող է ամբողջությամբ ֆինանսավորել ենթակառուցվածքը: Հովանավորը կարող է լինել նաև աշխարհի յուրաքանչյուր ընթերցող՝ իր փոքրիկ մասնակցությամբ:

Բայց հովանավորը կարող է լինել նաև աշխարհի ամենասովորական մարդը՝ նա, ով պարզապես կարդում է այս գիրքը, պատմում է դրա մասին ուրիշներին և իր ուշադրությամբ մասնակցում գործընթացին:

Այս նախագծում հովանավորությունը միայն ֆինանսական աջակցություն չէ:

Այն մասնակցության ձև է:

Մեծ ֆինանսական աջակցությունը ստեղծում է նյութական հիմքը: Բայց գաղափարի իրական ուժը տարածվում է մարդկանց միջոցով, ովքեր այն փոխանցում են իրենց ուշադրությամբ և քննարկումներով:

Այդ պատճառով այս նախագիծը բաժանում չի դնում «մեծ» և «փոքր» մասնակիցների միջև: Այստեղ կա միայն մեկ չափանիշ՝ պատրաստակամությունը մասնակցելու:

Գոյության մասին հարցը չի պատկանում ընտրանիներին: Այն պատկանում է բոլորին, ովքեր մտածում են:

Եվ եթե այս գործընթացը իրականություն դառնա, ապա այն կդառնա ոչ միայն գիտական իրադարձություն, այլ նաև հազվագյուտ օրինակ, երբ մարդկությունը հավաքականորեն մասնակցում է իր ամենախորը հարցերից մեկին, որին սպասել է հազարամյակներ:

Եվ այստեղից սկսվում է արդեն այն ճանապարհը, որը դուրս է գալիս գրքից և մտնում իրական ժամանակի մեջ:

ԳԼՈՒԽ 25. Գործընթացի մեխանիկան

Այս գլուխը նկարագրում է 1000-օրյա նախագծի գործնական կառուցվածքը:

Այստեղ ներկայացվում են ոչ թե գաղափարներ, այլ գործող քայլեր:

Ի՞նչ է սկսվում:

Սկսվում է 1000-օրյա բաց միջազգային գիտական գործընթաց, որի նպատակը մեկ հիպոթեզի՝ «Աստծո գոյությունը խիստ ապացուցելի է գիտական իմաստով» ստուգումն է:

Ինչո՞ւ է սկսվում

«Աստծո գոյությունը» հարց է, որը վերաբերում է մարդու աշխարհընկալման հիմքին, սակայն գործող գիտական համակարգերում դրա ստուգումը դժվար է:

Ո՞վ կարող է մասնակցել:

Ցանկացած գիտնական, համալսարան կամ հետազոտական խումբ, անկախ երկրից և կարգավիճակից:

Որտե՞ղ են ներկայացվում աշխատանքները:

Աշխատանքները ներկայացվում են անկախ ստուգող գիտական կառույցին (ԱՍԳԿ), որը գործում է հեղինակավոր միջազգային համալսարանի հիմքի վրա և աշխատում է օնլայն բաց հարթակով:

Ի՞նչ է անում ԱՍԳԿ-ն:

ԱՍԳԿ-ն իրականացնում է ներկայացված աշխատանքների խիստ գիտական ստուգում և յուրաքանչյուր աշխատանքի վերաբերյալ հրապարակային որոշում է ընդունում:

Որքա՞ն է տևում ներկայացման փուլը:

1000 օրացուցային օր:

1001-րդ օրը նոր աշխատանքներ չեն ընդունվում:

Ե՞րբ է ներկայացվում գրքի հեղինակի ապացույցը:

Գրքի հեղինակի ամբողջական ապացույցը ներկայացվում է 1000-րդ օրը՝ նույն բաց կանոններով, միանալով ընդհանուր գործընթացին:

Ի՞նչ է տեղի ունենում ստուգումից հետո:

Եթե հաստատվում են ապացույցներ, ԱՍԳԿ-ն հրապարակայնորեն հայտարարում է արդյունքները: Լաստատված աշխատանքները հրապարակվում են գիտական ձևաչափով և բաց են հանրային ուսումնասիրության համար:

Կա՞ հետագա քննության փուլ:

Այո: Հրապարակումից հետո գործում է 200-օրյա բաց քննության շրջան, որի ընթացքում ցանկացած մասնագետ կարող է ներկայացնել հիմնավորված առարկություններ:

Ի՞նչ է տեղի ունենում, եթե առարկություններ չկան:

Հաստատված աշխատանքների հեղինակները
ճանաչվում են որպես հիպոթեզի լուծում ներկայացրած
գիտնականներ:

Կա՞ մրցանակային ֆոնդ:

Այո: Սահմանվում է 10 միլիոն ԱՄՆ դոլարի
մրցանակային ֆոնդ, որը հավասարապես բաշխվում է
հաստատված ապացույցների հեղինակների միջև:

Ո՞վ է ֆինանսավորում գործընթացը:

Գործընթացը ֆինանսավորվում է հովանավորների,
նվիրատուների և հանրային աջակցության միջոցով:

Որքա՞ն է ամբողջ ծրագրի տևողությունը:

1000 օր + 200 օր = 1200 օր:

Ի՞նչ նոր գրքեր գրվելու են այդ ընթացքում:

Այո: Այս գործընթացի համար ստեղծվում է
եռագրություն.

- առաջին գիրքը՝ դուք հիմա կարդում եք,
- երկրորդը՝ 1200-օրյա գործընթացի ընթացքը,
- երրորդը՝ արդյունքների վերլուծությունը:

**Հնարավո՞ր է գործընթացի մշակութային
շարունակությունը:**

Գործընթացը կարող է դառնալ նաև վավերագրական
կամ գեղարվեստական ֆիլմերի հիմք:

ԳԼՈՒԽ 26. Ես ինչ կուզենայի

Այս գլուխը գիտական հայտարարություն չէ:

Սա պարզապես այն է, ինչ ես կուզենայի ասել այս գրքի վերջում կանգնած պահին:

Երբ մարդը երկար ճանապարհ է անցնում մի հարցի հետ, մի օր գալիս է մի պահ, երբ նա ուզում է կանգ առնել և պարզապես խոսել: Ոչ ապացույցներով, ոչ բանաձևերով, այլ մարդկային լեզվով:

Այս գլուխը այդպիսի պահ է:

Ես ինչ կուզենայի այս գրքի համար

Ես կուզենայի, որ այս գիրքը կարդացվի հանգիստ:

Ոչ որպես պատրաստի պատասխան, այլ որպես հրավեր՝ մտածելու, կասկածելու և ստուգելու:

Ես կուզենայի, որ այն հասնի տարբեր մարդկանց՝ գիտնականների, ուսանողների, մտածող մարդկանց:

Բայց ոչ միայն նրանց:

Ես կուզենայի, որ այս գիրքը հասնի նաև այն մարդուն, ով երբեք գիրք չի կարդացել: Կամ նույնիսկ նրան, ով կարդալ չի կարող:

Եթե այս գիրքը կարողանա թեկուզ մեկ մարդու մեջ արթնացնել մի պարզ միտք՝ «Ես ուզում եմ տեսնել՝ արդյոք դա ճիշտ է», ապա ինձ համար դա արդեն մեծ երջանկություն կլինի:

Որովհետև երբ այդ միտքը ծնվում է մարդու մեջ, սկսվում է ճանապարհը:

Ես ինչ կուզենայի այս գործընթացի համար

Այս գիրքը ավարտվում է, բայց իրականում այստեղից է սկսվում այն գործընթացը, որի մասին խոսվում էր այս էջերում:

Ես կուզենայի, որ այդ ճանապարհը մնա բաց և ազնիվ:

Որ քննադատությունը լինի գիտական, ոչ անձնական:

Որ մարդիկ չվախենան քննարկել այս հարցը:

Քանի որ եթե այս հարցը կարող է ունենալ գիտական պատասխան, ապա այն պետք է ստուգվի հանրային դաշտում:

Իսկ եթե չունի, ապա դա նույնպես պետք է պարզ դառնա նույն բաց ճանապարհով:

Ճշմարտությունը չի վախենում քննությունից:

Ես ինչ կուզենայի աշխարհի համար

Ես կուզենայի, որ մարդիկ չվախենան հարցերից:

Ես կուզենայի, որ հավատքը և մտածելակերպը դադարեն միմյանց հակառակ կանգնել:

Որ մարդկությունը կարողանա հանգիստ խոսել իր ամենախոր հարցերի մասին:

Եթե այս պատմությունը երբևէ շարունակվի մշակույթի մեջ, այն կարող է պատմվել նաև արվեստի լեզվով:

Օրինակ՝ կինոյում:

Եթե այս գիրքը եռագրության առաջին գիրքն է, ապա հնարավոր է պատկերացնել նաև երեք լիամետրաժ ֆիլմերից կազմված պատմություն:

- Առաջին ֆիլմ — «Առաջին օրը 1000 օրվա»
- Երկրորդ ֆիլմ — «1000 օր»
- Երրորդ ֆիլմ — «1000 օրից հետո»

Բայց նույնիսկ եթե այդ ֆիլմերը երբեք չնկարահանվեն, ինձ համար կարևոր է մեկ բան:

Որ մարդիկ չվախենան մտածել:

Որ մարդիկ չվախենան ստուգել:

Որովհետև այս գիրքը պատասխան չէ:

Այն պարզապես հրավեր է:

Հրավեր միասին տեսնելու՝ արդյոք դա ճիշտ է:

Ինչպես կարող է շարունակվել այս ճանապարհը

Այս գիրքը միայն պատմություն չէ:

Այն նաև առաջարկ է՝ սկսելու մի գործընթաց:

Այդ գործընթացը ժամանակի մեջ է և պահանջում է իրական քայլեր:

Այս գրքի վաճառքից ստացված միջոցները նախատեսված են ծառայելու այն ճանապարհին, որը այստեղ ներկայացված է որպես 1000-օրյա բաց գիտական փորձություն: Գիրքը կա առցանց հարթակներում և կլինեն գրախաճուրճերում:

Այսինքն՝ յուրաքանչյուր մարդ, ով ձեռք է բերում այս գիրքը, արդեն իր մասնակցությունն է բերում այդ գործընթացին:

Ոմանք կարող են աջակցել փոքր քայլով:

Ոմանք՝ մեծ:

Եվ հնարավոր է, որ մի օր այս գիրքը հասնի այն մարդուն, ով կկարողանա մեկ քայլով ապահովել ամբողջ գործընթացի իրականացումը:

Բայց նույնիսկ առանց այդպիսի աջակցման, գաղափարները շարունակում են իրենց ճանապարհը:

Երբեմն բավական է, որ մեկը փոխանցի մի միտք մյուսին:

Այդպես են սկսվում ճանապարհները:

Ինչու այս հարցը կարևոր է

Այս գիրքը պատմեց մեկ մարդու ճանապարհի մասին: Ճանապարհ, որը սկսվեց մի փոքր հարցից և տարիների ընթացքում հասավ մի կետի, որտեղ հարցը դարձավ շատ ավելի մեծ, քան մեկ մարդը:

Ես այստեղ ներկայացրել եմ ոչ թե հերոսի պատմություն, այլ վկայություն:

Վկայություն այն մասին, թե ինչպես կարող է մեկ մարդու ներսում ծնված հարցը դառնալ գիտական որոնում՝ ուղղված գոյության հիմքին:

Եթե մարդը կարող է գտնել Աստծուն գիտական լեզվի սահմաններում, ապա այդ հայտնագործությունը չի պատկանում հեղինակին:

Այն պատկանում է ժամանակին:

Եվ մարդկությանը:

Այս գիրքը մեկ մարդու, մեկ գիտական ապացույցի և մեկ ընթերցողի ճանապարհի պատմություն է:

Բայց դրա ավարտը մեկ մարդու ձեռքում չէ:

Բոլորի ձեռքում է:

Եթե այս ճանապարհը հաջողվի, այն կդառնա
ընդհանուր ձեռքբերում:

Եթե այն ձախողի, այն կմնա որպես համարձակ փորձ՝
հասկանալու գիտության սահմանները:

Գուցե ապագայում մարդիկ հետ նայեն այս պահին և
տեսնեն ոչ թե ավարտ, այլ այն կետը, որտեղ սկսվեց
մի նոր խոսակցություն մարդկության և իրականության
միջև:

Որովհետև որոշ պատասխաններ ծնվում են միայն այն
ժամանակ, երբ մեկը համարձակվում է հարցնել:

Եվ երբ այդ հարցը այլևս չի պատկանում մեկ մարդուն:

Այն պատկանում է բոլորին:

Միգուցե մենք նորից հանդիպենք

Այս գիրքը ավարտվում է այստեղ:

Բայց ճանապարհը շարունակվում է:

Ես կուզենայի, որ այդ ճանապարհը ունենա նաև մի
տեղ, որտեղ մարդիկ կարող են հանդիպել, կարդալ
գիրքը, մտածել և քննարկել:

Այդ տեղը գրքի պաշտոնական կայքն է:

www.book2126.com

Այնտեղ կարելի է տեսնել, թե ինչպես է այս հարցը
շարունակում ապրել ժամանակի մեջ: Սկզբում շատ

հասարակ և սովորական կայք, հետո արդեն հետոն
ցույց կտա:

Գուցե այնտեղ մենք նորից հանդիպենք:

Գուցե այս գիրքը սկսվեց իմ հարցից:

Բայց այս պահին այդ հարցը արդեն կարող է լինել
նաև ձերն էլ:

Գուցե այս պահին դուք պարզապես փակեք այս գիրքը
և շարունակեք ձեր օրը:

Բայց գուցե մի օր, շատ հանգիստ պահին, այս հարցը
նորից վերադառնա ձեր մտքին:

Եվ այդ պահին դուք ինքներդ ձեզ ասեք.

Ես ուզում եմ տեսնել՝ արդյոք Աստծո գոյության այս
ապացույցը իսկապե՞ս ճիշտ է:

Այս հարցը նոր չէ:

2500 տարեկան է:

Դարերի ընթացքում մարդկության ամենամեծ
մտածողները տարբեր ձևերով փորձել են
պատասխանել դրան:

Փիլիսոփաները փորձել են հասկանալ այն
տրամաբանության միջոցով:

Աստվածաբանները՝ հավատքի լեզվով:

Երբեմն նույնիսկ մեծ գիտնականները չեն շրջանցել
այդ հարցը:

Արիստոտելը խոսում էր «Առաջին շարժիչի» մասին՝
այն սկզբունքի, որը շարժում է աշխարհը:

Դարեր անց Անսելմ Քենթրբերցին փորձեց տրամաբանությամբ ձևակերպել Աստծո գոյության ապացույցը:

Նոր ժամանակներում Ռենե Դեկարտը և Բարուխ Սպինոզան փորձեցին նույն հարցին մոտենալ բանականության և խիստ տրամաբանական կառուցվածքի միջոցով:

Եվ երբ գիտությունը սկսեց բացել տիեզերքի օրենքները, այդ հարցը չվերացավ:

Իսահակ Նյուտոնը, ուսումնասիրելով տիեզերքի մաթեմատիկական կարգը, տեսնում էր դրա մեջ ստեղծագործող մտքի հետքը:

Դարեր անց Ալբերտ Էյնշտեյնը խոսում էր տիեզերքի խոր ներդաշնակության մասին, որը մարդու մեջ առաջացնում է տիեզերական զարմանք:

Այդպես այս հարցը երկար ժամանակ մնացել է երկու աշխարհների սահմանին՝ հավատքի և գիտության:

Գրեթե 2500 տարի մարդկությունը շարունակում է նույն խոսակցությունը:

Այս գիրքը ծնվել է որպես այդ երկար խոսակցության շարունակություն:

Բայց այսօր այստեղ տեղի է ունենում մի փոքր, բայց կարևոր փոփոխություն:

Այս հարցը այլևս չի մնում միայն մեծ մտածողների շրջանակում:

Այն գալիս է մեզանից յուրաքանչյուրի մոտ:

Այն դառնում է մի հարց, որի շուրջ կարող է մտածել յուրաքանչյուր մարդ:

Եվ եթե այս ճանապարհը ընթանա մինչև իր ավարտը, ապա այդ երկար խոսակցության մեջ առաջին անգամ կհայտնվի մի բան, որը մինչ այժմ չի եղել:

Ապացույցը:

Իմ ապացույցը:

Եվ այդ պատճառով այս պատմության հաջորդ քայլը արդեն միայն իմը չէ:


Այն ձերն է նույնպես:

Եվ գուցե հենց այս պահին դուք արդեն այդ խոսակցության մասնակիցն եք:

«2500 տարվա խոսակցությունից հետո՝ ժամանակն է ստուգել ապացույցը»:

1000 օր ստուգում:

1 օր՝ պատասխան:



ՎԵՐՋԱԲԱՆ

Այս գրքում ես չեմ ներկայացնում ապացույցը
ամբողջությամբ:

Ապացույցը ունի ամբողջական կառուցվածք, սակայն
1000-օրյա բաց գիտական գործընթացի նպատակով
այն ներկայացվում է երեք գիտական հոդվածների
միջոցով:

Առաջին հոդվածը ներկայացված է այս գրքում:

Այն ցույց է տալիս ապացույցի սկզբնական
կառուցվածքը և հաստատում է, որ 1000-օրյա
մարտահրավերը հայտարարություն չէ, այլ իրական
գիտական պահանջ:

Երկրորդ հոդվածը կներկայացվի 1000-օրյա գործընթացի ընթացքում՝ բաց միջազգային ստուգման պայմաններում:

Երրորդ և վերջնական հոդվածը կհրապարակվի 1000-րդ օրը՝ նույն բաց պայմաններով բոլոր մասնակիցների համար:

Այս ձևը ընտրված է դիտավորյալ:

Ապացույցը չպետք է պատկանի միայն հեղինակին:

Այն պետք է անցնի ժամանակի միջով, ստուգման միջով, և բաց գիտական գնահատման միջով:

Ստորև բերված գիտական հոդվածը ներկայացված է անգլերենով՝ իր բնօրինակ տարբերակով:

ARTICLE 1

Manuscript Title: The Existence of God Is Strictly Provable in the Scientific Sense - A Structured Examination of Hypothesis 1 (“God Exists”) and the Formulation of Hypothesis 2 Concerning Its Strict Scientific Proof

Author: Artush Zurabyan

Affiliation: Independent Researcher

E-mail: matrix.arzu@gmail.com

www.book2126.com

Competing Interests: The author declares no competing interests.

City, Country: Yerevan, Armenia

Year: 2026

1. Title

The Existence of God Is Strictly Provable in the Scientific Sense - A Structured Examination of Hypothesis 1 (“God Exists”) and the Formulation of Hypothesis 2 Concerning Its Strict Scientific Proof.

2. Abstract

This scientific article presents a structured investigation of Hypothesis 1 (“God exists”) and

introduces Hypothesis 2, which states that there exists a hypothesis (hereafter referred to as Hypothesis 3) capable of providing a strict scientific proof of Hypothesis 1.

The purpose of this work is to construct a scientifically legitimate, logically ordered, and formally analyzable framework within which the question of the existence of God is examined in a rigorous scientific manner.

The article demonstrates that the question of God's existence is embedded within a scientifically analyzable structure through the use of precisely defined terms, a minimal formal ontology, and explicit principles of causality.

A conceptual model is developed showing that, if Hypothesis 2 is true, it logically entails the postulative truth of Hypothesis 1.

This framework establishes the necessary foundation for subsequent rigorous proofs.

Specifically:

This article constitutes Part 1 of a broader scientific research program.

- Part 2 (Article 2) will be devoted to the explicit formulation of Hypothesis 3 derived from Hypothesis 2 in its final form, as well as to the construction of its strict mathematical architecture.

- Part 3 (Article 3) will present a strict scientific demonstration of Hypothesis 1 based on this formal structure.

Philosophy has often claimed that the existence of God cannot be scientifically proven. Hypothesis 2 resolves this apparent paradox because:

- science is not required to prove God directly;
- science is required to investigate the logical possibility of such a proof;
- this investigation lies entirely within the domain of formal logic.

Thus:

- Science → investigates the structure of proof.
- Hypothesis 2 → asserts the existence of such a structure.
- Hypothesis 1 → emerges as the consequence of a meta-logical analysis.

Accordingly, the present work lays the conceptual and logical groundwork for a broader scientific research project aimed at providing a strict scientific answer to the fundamental question: Does God exist?

3. Introduction

The existence of God is one of the most fundamental and persistent questions in human inquiry.

Historically, this question has been addressed within philosophy, theology, and metaphysics. However, a

strict scientific formulation based on logically structured analysis and a minimal formal ontology has not yet been developed.

The aim of this article is to construct such a framework. Its primary objectives are:

- to demonstrate that Hypothesis 1 (“God exists”) can be formulated in a scientifically admissible manner through clearly defined logical and ontological foundations;
- to introduce Hypothesis 2, which enables the construction of a scientific model leading to a strict proof of Hypothesis 1;
- to ensure that the present work is neither religious, theological, nor purely philosophical, but instead constitutes a formal-logical scientific investigation grounded in structural reasoning, precise definitions, and rigorous principles of causality.

The scientific problem addressed in this study can be formulated as follows:

- there currently exists no strict scientific proof of the existence of God;
- this absence represents a significant unresolved gap within the domain of fundamental scientific inquiry.

The solution proposed by the author is the development of a logically coherent conceptual

structure that, in subsequent articles, will lead to a fully formalized mathematical proof.

4. Purpose and Structure of the Study

The primary purpose of this study is to construct a logically coherent scientific framework within which:

- Hypothesis 1 (“God exists”) can be formulated in a scientifically acceptable manner, based on strict definitions, minimal ontology, and formal causality;
- Hypothesis 2 can be introduced as a scientific claim concerning the provability of Hypothesis 1, rather than as a metaphysical or theological assertion;
- A two-level analytical system can be developed, in which:
 1. Level 1 establishes the logical necessity of a Non-Derived Being (NDB);
 2. Level 2 develops the formal model for a strict scientific proof, to be presented in subsequent articles.

This article constructs the foundational logical framework upon which the subsequent research program will be built.

5. Core Hypotheses

Two fundamental scientific hypotheses are

introduced.

Hypothesis 1: “God exists.”

Within the scientific context of this article, this statement is interpreted as the claim that a fundamental Non-Derived Being (NDB) exists — a necessary structural element of reality, derived not from theology, but from minimal ontology and the logic of causality.

Hypothesis 2: “There exists a hypothesis (hereafter referred to as Hypothesis 3) that strictly and scientifically proves Hypothesis 1.”

This hypothesis has essential methodological significance.

It asserts the existence of a strict scientific proof of Hypothesis 1 in principle.

The present article constitutes the first part of the project: it prepares the logical foundations required for the formal and rigorous demonstration to be developed in Articles 2 and 3.

6. Justification for the Two-Level Analytical System

A scientific analysis of the question under investigation requires a division into two analytical levels.

Level 1 — Establishing the Logical Necessity of a Non-Derived Being (NDB)

This level includes:

- minimal ontology;
- principles of causality;
- exclusion of infinite regress;
- exclusion of circular causality.

The objective of Level 1 is to demonstrate that the existence of a Non-Derived Being is logically necessary for the coherent structure of reality.

Level 2 — Formal Mathematical Proof

